



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



891.99-82

ՀԱԿԻՂ

1914

Ա- Գրք.

Բարձր





# Հ Ա Ի Ի Ղ

18

Գրական-հասարակական ժողովածու

Ա. ԳՐԻՈՅԷ

ШАВИХЪ

(Тропа)

Литературно-общественный сборникъ

891.5  
5-

2001

2013

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընթերցողներին.

ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

1. Ունատակ տւած արդարութիւնը (վէպ) շարունակելի՝  
Սմբատ Իւզրաշի:

2. Շիրակի դաշտերը (պօէմից) Իս. Իսահակեանի:

3. Ու մենք քայլում ենք, Չօն. (բանաստ.)՝ Սուրէնի.

4. \* \* \* (բանաստ.)՝ Անուրջի:

5. Վրէժ (պատմւածք) Սուրէնի.

6. Նախերգանք („Սարերի սէրը» պօէմից) Եղիա Տէր-Հայ-  
րապետեանի:

7. «Մի լինիր», Մի երգիր, \* \* \*, \* \* \* (բանաստ.) Սմբատ Իւզրաշի.

8. «Ստորերկրեայ երգը», «Լոյսերը մարում են» (պատմ-  
ւածքներ) Ա. Գեանջեցեանի:

ԳՐԱԽՕՍՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

Խաչատուր Աբովեան (նկարով)՝ Տ. Տ.-Գ.-ի:

ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

Հայոց պատմութիւն. Նախապատմական շրջան. Տ. Տ.-Գ.-ի:

Ա.Ռ.ՈՂ.ԶԱՊԱՀԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ապահական գրոյցներ. մանրիկներ՝ բժ. Մ. Մանգլինեանի.

տեանի մայիսի սկզբներին. նիւթեր

ն. № 11. Սմբատ Իւզրաշի:

~~250 p~~

118  
—

891.542-82  
6-34

# Հ Ա Խ Ի Ղ

Գրական-հասարակական ժողովածու

Ա. ԳՐԻՈՅԷ

## ШАВИХЪ

(Тропа)

Литературно-общественный сборникъ

БАКУ


Типографія газеты „Баку“

1914.

-10K.

4608

Р Р Р Р Р



6887 - h h .

1069  
41



## ԸՆԹԵՐՑՈՂ ՆԵՐՒՆ

Հրատարակելով ժողովածուս—մեր նպատակն է եղել՝ աշխատել, ուժերնիս ներածին չափ, մատչելի և արգասաւոր դարձնելու նրան ժողովրդական ամենալայն խաւերին:

Դժւարանում ենք ասել՝ թէ ներկայ գրքոյկով որ աստիճան մօտեցել ենք մեր նպատակին. այդ պէտք է ցոյց տայ ասպագան իր ուսանելի փաստերով:


Մի բան, սակայն, մեզ ակներև է, որ այս Ա. գրքոյկը լինելով մի կողմից մեր սեղմ շրջանի արտադրած գործ, միևս կողմից՝ որպէս սկզբնական արտայայտիչը այդ գործի,—ազատ չի լինի թերութիւններէ:

Մենք այժմանից ամենայն կերպ աշխատելու ենք ընդլայնել մեր շրջանը հեռաւոր ու մօտաւոր ձեռնհաս ուժերով և հաւատացած ենք,

որ ապագայում լոյս տեսնելիք գրքոյկները, հնարա-  
ւորութեան չափ, համապատասխան կը դառնան  
առաջադրւած նպատակին:

Մենք շունենք ո՛չ կողմնակի աջակցութիւն,  
ո՛չ մեծամեծ միջոցներ: Մեզ աջակից պիտի լինի  
յիշւած ժողովրդական խաւերի ինքնագիտակցու-  
թիւնը՝ պահպանելու իրեն համար առաջ եկած  
այս համեստ գործը և սրանով, թերևս, խրա-  
խուսելու աւելի կարող ուժերին՝ հրապարակ գա-  
լու առաւել լրջօրէն և առաւել կատարեալ ձևով:

ԽՄ ԲԱԳՐՈՒԹԻՒՆ



# ՈՏՆԱՏԱԿ ՏԻԱԾ ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆԸ

(ՎԷՊ)

## I.

Ն. գիւղի արևմտեան կողմը բարձրանում է Մատուռի-Սարը, որը Արագածի գագաթից շղթայաձև իջած լեռների ու բլուրների մի փոքրիկ օղակն է կազմում: Գագաթը կաթսայանման մի հարթութիւն է, եզրափակւած սուր սուր ժայռերով. դէպի գիւղը նայող ժայռերի արանքում կառուցւած է սրբատաշ մի մատուռ, որից բլուրը ստացել է իր «Մատուռի-Սար» անունը: Այստեղից սկսած սարալանջը ժայռէ տերրասներով իջնում է մինչև գիւղի սահմանը, ուր վերջին տերրասը մեծ-մեծ ժայռերից է կազմւած և գիւղի հեռաւոր ու առանձնացած անկիւնն է: Թէև տարէց-տարի գիւղը ընդարձակւում, ծաւալւում է, բայց դէպի այս մենաւոր ժայռերը բարձրացող, բնակութիւն հաստատողներ չկան: Տարօրինակ արտաքինով գետնափոր մի խրճիթ միայն կայ այստեղ,—և այդ՝ տառապանքներով ու արկածներով լիքը անցեալ ունեցող Պօլօզի խուցն է:

Պօլօզը, որի կնքանունը Պօղոս է եղել,—Տ տարեկան հասակում որբացաւ իր մեծ քոյր՝ տասնամեայ Սաթօի հետ: Նրանց թէ հայրը և թէ մայրը միևնոյն տարւայ մէջ մահացան համաճարակից: Գիւղի ունևորներից

էին նրանք—հարուստ էին հացով, տաւարով, ոչխարով, արտ-ափով: Հայրը՝ Յակօն բարձրահասակ, շագանակագոյն մազերով, գրաւիչ աչքունքով, արծաթիթ մարդ էր, և աչքի էր ընկնում, սովորաբար, իր պարզամտութեամբ, դիւրահաւատութեամբ և զգաց բնաւորութեամբ: Բնաւորութեան երկու ցայտուն գծեր ևս ունէր Յակօն, որոնք խոշոր դեր էին խաղում նրա ընտանեկան ամենօրեայ յարաբերութիւնների մէջ.—մէկը՝ նրա յորդաբուղիս և անհատնում եռանդն էր դէպի Ֆիզիքական աշխատանքը, միւսը՝ խանդավառ սէրը դէպի կեանքի վայելքն ու խնճոյքը և ընկերական սեղմ շրջանը. նա ապրում էր իր մեծ եղբայր Պետօի հետ միասին, սակայն նրանք իրար հետ խօսում էին, կամ ինչպէս գիւղացիք են ասում՝ իրար հետ լեզու էին թրջում միմիայն մի քանի տօն օրերին, երբ, աւանդական սովորութեան համաձայն, գիւղում հարկադրւած իրար են դիմաւորում՝ շնորհաւորէք անելու և ապա սեղան նստում: Քէնի և ջղայնութեան այս երևոյթը, որը ան առաւել աչքի է ընկնում գիւղերում,—գոյգ եղբայրների կեանքում շատ խոր և միևնոյն ժամանակ ժառանգական պատճառների հետ էր կապւած. ահա այդ պատճառներից մէկն էր Յակոյի վայելքատենչ և շռայլող բնաւորութիւնը, որը շատ ծանր էր Պետօի և նրա կին Շողօի համար. վէճը, անէծքն ու հայհոյանքը և կիսախուլ մրթմրթօցն էին նրանց ընտանեկան յարաբերութիւնների լեզուն ու արտայայտիչը...

Խորը պատճառներ ունէր նաև նրանց միասին ապրելը ընտանեկան այդ դժոխքում, և այդ պատճառներից մէկը, գուցէ և ամենակարևորը, պէտք էր համարել Յակօի և նրա կնոջ՝ Նուբարի յախուռն և չըսպառուող եռանդը դէպի Ֆիզիքական աշխատանքը: Պետօն ու Շողօն յաճախ նոյնիսկ հրճւում էին այդ քաջառուծ մարդու և կը-

նոջ կատարած գործերով, բայց երբէք, երբէք լոյս աշխարհ չէին հանում իրանց հոգիների ծալքերում ծնւող ու խեղդւող այդ զգացմունքը... Այսպէս հոգեկան աշխարհով շատ նման էին իրար Պետօն ու Շողօն և Յակօի ու նամանաւանդ Նուբարի հակապատկերն էին: Աշխատասիրութեան կողմից Նուբարը գերազանցում էր Յակօին. — այդ մանր հասակով, նւազ ու քնքուշ կազմւածքով կինը օրն ի բուն, ճիշտ և ճիշտ, մըջիւնի նման աշխատում էր, անդուլ, անսպառ աշխատում: Անգործութիւնը, պարապ նստելը ձանձրոյթ ու մահ էին նրա համար. — «Աստուած մարդուս ձեռ ու ոտ է տւել, որ մինչ ի մահ աշխատի, քրտինք թափի», — ասում էր նա շարունակ: Մերձաւորին ուրախացնելու, բաղդաւորացնելու համար նա պատրաստ էր շաբաթներով անքուն ու անզաղար սարերին խփել իրան՝ պար, խրախճանք, հարսանիք սարքել, ոտաբոբիկ հազար ու մի ծառայութիւն կատարել, բայց իրեն համար, յատուկ իրեն համար նա երբէք ոչ կը կարօտէր և ոչ կերազէր այդ պար ու խնճոյքը, և իր ամուսին Յակօի անյազ տենչը դէպի կեանքն ու արբեցումները երկար տարիների ընթացքում մնացել էին անհարազատ նրա հոգուն: Նրա տանող, ներող և անյիշաչար բնավորութիւնը շատերին զարմանք, նոյնիսկ զայրոյթ էին պատճառում. ընտանիքում շատ զրկանքներ էին կրում ինքն ու իր որդիները տեքրակին Շողոյից և Պետօից, բայց նա իր շարքաշ աշխատանքի հետ տանում էր լուռ ու անտրտունջ ալդ ամենը յանուն խաղաղութեան, յանուն իր պատւի, ու երբէք, երբէք այդ մասին նա չէր խօսում Յակօի հետ մի բառ անգամ: — «Է՛հ, հիմա յաւել ուտելով ու յաւել հագնելով ո՞վ ա իր գեանքի օրերն յաւելացրել, բերադի էլ մէկ ա, մարդուս հոգին ա հարկաւոր», — մխիթարում էր նա իրեն շարունակ այս խօսքերով:

Տեքրական Շողօն, ինչպէս առածն ասում է, մատը մոխրին չէր տալիս. — ամբողջ տարին ոտից գլուխ պինդ փաթաթած հաստ կտորների մէջ, թոնրի կողքին նստած, տնքում էր անընդհատ՝ յայտնելով ամենքին, որ ինքը հիւանդ է, և դժգոհում շարունակ, որ իրեն, ինչպէս հարկն է, հոգ չեն տանում... Ամենքը հաւատացած էին, որ նրա հիւանդութիւնը շինծու է, և զգւանք ու ատելութիւն էին զգում դէպի նա, բայց Նուբարի համար այդ միևնոյն էր, թէպէտ նա մշտապէս էլ դիտում ու ըմբռնում էր տիրող եղելութիւնը. նրա փիլիսոփայութիւնը այս էր. —

— Զայնամ, հիմա յամեն մարդու մեղքը իրենից են յուզելու... Աստուած ընձի ձեռ ու ոտ, խելք ու դատողութէն ա տւել — գլոխս քաշ բըտի աշխատիմ մինչի վերջին օրս. հիմա օր նստայ ու խըլղի լաւն ու վատը ասեցի, հոգուս մեղք յաւելցրի — բըտի ուղղիմ նրանց... կարմիր կոփս իր կաշուցը դուս կի գա՛յ...

188... թւի աշնան հոկտեմբեր ամսին էր, երբ տարափոխիկ հիւանդութեամբ անկողին մտաւ Յակօն. նրա հիւանդութիւնը տևեց ընդամէնը 7 օր: Հոգէվարքի ընկալին երբ նկատեց գլխավերևը նստած մեծ՝ եղբայր Պետօին մութ դէմքով և արցունքն աչքերին, կարծես, մոռացաւ իր ցաւը և աղերսող նայւածքը ուղղելով նրա երեսին — բացականչեց.

— Պետօ, վենձ ախպէր, վիրև Աստուած, ներքև դու ես մնում իմ էրեխէքուս տէր ու տիրականը. — թէ Աստուածդ կըսիրիս, չը ջոկես նրանց քու Գէորդից (Պետօի որդ ին), մէկ յաչքով մտիկ տաս յամենքին...

Պետօն, որ իրօք կեանքում անկեղծ զգացում էր

այսպիսի կրօնական վայրկեանների առաջ, ուր չկար կոպէկի հարցը,—գոչեց սրտաբուղիս և մորմոքալից ձայնով.

—Վա՛խ, իմ թառլան ախպէր, սև հողերը թող կուցկուց \*)գան, ծածկին իմ խրուրժած \*\*) մազերը, որ էս էրկըսին էլ իմ ջուխտ յաչքի լուսի պէս չը պահպանիմ... Այս արտասանելիս նա հեկեկաց ծանրացած շնչով, աչքերին սեղմեց ձեռքի մեծ ու գունաւոր թաշկինակը և էլ չկարաց շարունակել... Տիրեց մահամերձի շուրջը խուլ հեկեկոց և շարունակեցին աւելի առատ ցած գլորւել մաքուր ու անմաքուր արցունքներ... Այդ արցունքներից ամենաանմաքուրը Պետօի կին Շողօինն էր, որը անհանգիստ, ջղաձիգ շարժումներով մահամերձի շուրջը, անկիւնից անկիւն էր անցնում...

## II.

Յակօի մահից անցել էր 4 ամիս և հիմա Սաթօն ու Պօղոսը գլխովին որբ էին մնացել.—երկու ամիս առաջ հողին յանձնեցին և նրանց վշտահար մօր՝ Նուբարի մարմինը:

Տասնամեայ Սաթօն հիմա բոլորովին լռակեաց էր դարձել... Ամբողջ օրերով չէր լսում նրա ձայնը, չէր նկատում նրա դէմքին որևէ փոփոխութիւն. մութ, մելամաղձիկ մի ուրւական էր այժմ այդ տարօրինակ էակը... երբ ստիպում էին նրան խօսել և կամ առոյգանալ, փո-

\*) Բոունցք-բոունցք, այս ոճը առաջացել է այն պատկերից, երբ մեռելը թաղելիս բոունցքներով հող են շաղ տալիս նրա դէմքին:

\*\*) Սպիտակած:

խել իր թմրած կեանքի ընթացքը, — հետևանքը մշտապէս լինում էր խուլ հեկեկոց և ապա աղեկտուր լաց...

Մենակեաց, մելաղձիկ էր Սաթօն ի ծնէ, և այդ երևում էր նրա մանկութեան առաջին օրերից: Նրա վայելուչ և փարթամ հասակը, սաթի նման սևորակ աչքերը՝ եզերւած նրբագիծ ունքերով, գեղեցկադիր և լիքը այտերը, երկար պարանոցը, թիկունքին շող եկած մազերի սև ամպակոյտը մի հոգեթով ներդաշնակութիւն էին կազմում այդ անխօս էակի մէջ, — բայց այդ ներդաշնակութիւնը չէր ծնւած, կարծես, այս աշխարհի համար... Սաթօի մօտից անցկենող իւրաքանչիւր մի անձ, որի հոգեկան դրութիւնը խաղաղ էր, — պէտք է ժպտար անսայման այդ փոքրիկ փերու երեսին, զգար սրտում մի ջերմ փափակ՝ գրկելու նրա երկար-մարմարեայ պարանոցը, անարատ քնքշութեամբ սեղմել կրծքին այն գեղեցիկ գլուխը, համբուրել մազերի այն փարթամ կոյտերը... բայց նա մելամաղձիկ ու լուռ խորշում էր ամենից...

Պօղոսը ալժմ բոլորովին փոխւել էր: Նա ծնւել էր թէ արտաքինով և թէ ներքինով շատ տարբեր Սաթօից. մարմնի կազմութեամբ նման էր մօրը — կարճահասակ էր և նրբակազմ. բայց ժիր էր, չարաճճի և անհանգիստ բնաւորութեան տէր:

Որպէս գիւղացու զաւակ, — նա մանկութեան ամենաառաջին օրերից ընդհարւել էր ամենակոպիտ և վայրենի իրականութեանը և իր տարիքի համեմատ ճաշակել էր լիովին նրա թոյնը. սրանից զատ՝ լինելով օժտւած որոշ ըմբռնողական ընդունակութեամբ, — նա հօր ու մօր մահից յետոյ լիակատար կերպով պատկերացրեց իրեն իրերի դրութիւնը... վաղ մանկութիւնից Պետօն ու իր կիներ և այս երկուսի ուժեղ խառնուրդ Գէոր որդին թողել էին նրա զգայուն սրտի վրայ իրենց անջնջելի տպաւո-



ընթացում... տարիները տարածը պարզ ասում էր նրան,  
որ հորեղբոր մաշող նայածքը, կնճռոտ ու դաժան դէմ-  
քը, ոլորուն ու խրոխտացող կանչը անմարտելի և անտա-  
նելի են... Իսկ Շողօի շար, անկուշտ և նախանձոտ սիր-  
տը... և այս ամենի վրայ պիտի աւելանար Գէորդ՝ Պե-  
տօի մեծ որդին, որը 6—8 տարով մեծ էր Պօղոսից,  
յաղթանդամ էր հօր նման և իր ժլատութեամբ ու նեն-  
գութեամբ հօր ու մօրից շատ ու շատ անց...

### III.

Մարտ ամսի վերջերինն է. բնութիւնը մերթ պարզ-  
ւում է, ժպտում, մերթ՝ մռայլում: Դուրսը ամպ է, կաթ-  
կաթում է անձրևը և քամին սուրում արձակ դաշտերում...  
սակայն այդ մռայլութեան մէջ անգամ պարուրում են  
քեզ դուրեկան և հմայիչ յուշեր, երբ նայում ես ամ-  
պակալած երկնքին, մերկ սարերին և հոգեպէս ապ-  
րում գարնան առաջին թովշութիւնը... Բայց ի՞նչ է  
կատարւում այդ վայրկեանին գիւղական մի հինաւուրց և  
սևացած ծածքի տակ... ոլոր ու մոլոր մի մութ նրբանցք,  
որպէս մի նեղ արահետ, ձգւում է երկար և տանում քեզ  
այնտեղ՝ դէպի այդ սևացած ծածքը: Դա Պետօի հին,  
պապական տունն է. քանի անկիւն ունի այդ տունը—  
անհնարին է որոշել. նրա ներսի պատերը մշտական մը-  
թութեան մէջ են թաղւած, իսկ վերևի՝ ծածքի մէջտեղի  
քառանկիւնի փոքր երթիկը այդ լայնարձակ տան միջին  
մի բոլորակ տարածութիւնն է լուսաւորում միայն, և  
այն էլ աղօտ կերպով: Երբ է շինւել այս տունը,—այդ  
ոչ-ոք չգիտէ. Պետօի հայր թոփշի-Առաքելը, գուցէ, իմա-

նար, կամ յիշէր սրա հիմնարկութեան ժամանակը, բայց նա էլ ահա տաս տարի կայ, ինչ մեռել է և իր հետ գերեզման տարել թէ այս տան շինութեան, և թէ Պասկնիչի ու Բէբութովի կռիւներում կատարած իր բազմաթիւ քաջագործութիւնների պատմութիւնները... կենդանի ժամանակն էլ, Աստուած գիտէ, — արե՞լ է նա այսպիսի պատմութիւն, թէ ոչ. վերջապէս, ճամ պէտք է արած լինէր. Պետօի հետ տարին-տասներկու ամիս նա խռով էր, որովհետև սա չըբաւականացաւ հօրը հասցրած իր անհամար նախատինքներով ու գրկանքներով, — վերջն էլ խփեց նրա ոտը կոտրեց. այդ օրից սկսած թոփչի Առաքելը խոնար ու կիսամութ յողայում փակւած մնաց մինչև իր մահը՝ անդադար անիծելով Պետօին ու շրջապատին մերթ բարձրաձայն և հեկեկացող տօնով, մերթ՝ խուլ ու ճնշւած ձայնով: Նա չէր խօսում եւ փոքր որդու՝ Յակօի հետ, քանի որ սա էլ, ինչպէս ինքն էր պահանջում, — խնամք չէր տանում հօրը — միշտ դաշտում աշխատանքի լինելով, ազատ ժամանակն էլ խնճոյքին ու արբեցութեան տալով իրեն, — թողնում էր հօրը Պետօի ու սրա կնոջ քմահաճոյքների հանդէպ: Միակ անձը, որին նա յաճախ օրհնում և գոհունակութիւն էր յայտնում, — այդ Նուբարն էր, որը իր չարքաշ աշխատանքի միջոցին անգամ չէր մոռանում իր քրիստոնէական պարտքը՝ մեծին խնամելը, թէև այս բանը այնքան էլ դուր չէր գալիս Պետօին և նրա կնոջը, որոնց ամենօրեայ պահանջն ու հրամանը այն էր, որ Նուբարը աշխատի միմիայն իրանց ցուցմունքների համեմատ՝ տան պէտքերի վրայ...

Այսպէս հնացած շէնքի պատմութիւնը ոչ-ոք չգիտէր: Նրա հաստ-հաստ գերանները, որոնք յենւել էին մի քանի շարք զանազանաձև սիւների վրայ, — փթել էին սկսել վաղուց և փոշիացած շերտերը մոխրի գոյնով մաղւում էին յաճախ տան կիսամութ յատակի վրայ...

Պետօն վաղուց, շատ վաղուց ծրագրում էր նոր տուն կառուցանել—չքեղ ու սիրուն՝ այլան օթախով. նրա ծրագիրը երևան էր գալիս իւրաքանչիւր տարի ձմրան սկզբին, երբ, յողաները պատրաստի, հէքէաթն ու զրոյցը ծայր էին առնում, և տևում էր մինչև առաջիկայ գարունը՝ դաշտային աշխատանքների սեզօնը, երբ մոռացւում էր եւ ծրագիրը, եւ հէքէաթն ու զրոյցը—եկող ձմրանը նորից վերյիշւելու և գարնանը՝ նորից մոռացւելու... ու այսպէս մինչև այս օրը:

Պետօի այս պապական տան մէջ այսօր էլ կրկնւում էր սովորական, աւօրեայ երևոյթներից մէկը. Շողօն հին ու նոր կտորների մեծ կոյտը փաթաթած գլխին—նստել է թոնտրի կողքը և իր սովորականի համեմատ սնքում է միապաղաղ ու ծանր շնչով՝ գանգատւելով ամենին, որ ինքը հիւանդ է, որ խնամող չունի, որ Պետօն իրեն բարձի թողի է արել...

Զոյգ որբեր՝ Սաթօն ու Պօղոսը անհանգիստ այս ու այն կողմ, այս ու այն անկիւնն են պտոյտ տալիս, որ մի կտոր հաց դնեն բերանները, տանջող քաղցը յագեցնեն և ապա հանդ դուրս գան մաճկալների հետ հորիք քշելու: Ժամանակը սուղ է, և որբերը սրտատրոփ սպասում են՝ թէ ահա ներս կը մտնի Պետօն, կամ Գէօրը, և կամ, ինչպէս իրանք են անւանում, էն «անհոգի», «կեղծաւորի տղայ» մշակ Թորոսը, ու հայհոյանք, ծեծ, անարգանք կը թափւեն իրանց գլխին, որ չեն շտապում դէպի գործ. բայց սալան չի երևում, իսկ հացի տաշտն էլ փակւած է մառանում և բանալին Շօղօ տատոյի գլրպանումն է:

—Տատօ, կանչեց վերջապէս խեղդւած ձայնով Պօղոսը—չուռ գալով Շողոյի կողմը, մենք յառաւօտւանից ա-

նօթի ենք, բըտի էթանք հորիք քշելու. սըլէն վո՞րտեղ ա,  
մէ քիչ հաց դընենք բերաններս...

—Հայ շողը ուտիք... հայ ցաւը ուտիք... երկարա-  
ւուն տօնով և հիւանդին յատուկ նեղսրտութեամբ գոչեց  
Շողօն:—Կերաք, յամէն ինչ կերաք... հօր ու մօր գլոխն  
էլ կերաք... մկա էլ կրակ էղաք, մեր ջանը յընկաք...  
վերցրո՞ւ..., վերցրու բալնիքը, մառնի դուռը բաց, տաշտի  
մէ կողքը յերեկւայ փշուրները կիտւած են. էն փշուրնե-  
րից մէ քանիսը բեր, ու քրոջդ հետ զխտըւէք:

Մի քանի վայրկեան անց, Պօղոսը վերադարձաւ և  
բանալին տւեց Շողօին:

—Բեր... բեր ըստեղ սըլէն մէ տենիմ... Դո՞ւք էն  
պտուղը չիք... ես լաւ գինամ... կցկտուր հրամայեց Շո-  
ղօն:

Պօղոսը, աղամայ, ճնշւած սրտով մօտեցրեց սալան:

—Հայ դուք գրո՞ղն ուտիք, սև օձն ուտիք ու պրծնիք  
մեր եախից, մեր ջանն էլ դինջանայ... Հրպան-ան տեսա՞ր թէ  
ինչպիսի փշուրներ բերեց... բիրադի վենծ-վենծ ու թա-  
ժա հացի կտորտանք... կերա՞ք... կերա՞ք... բիրադի կերաք,  
հօր ու մօր գլոխն էլ կերաք, մացինք մենք... հայ բլբի  
գետօբէգետ էղնէին ու ձրզի լուս աշխարհ չքցէին, մըզի  
յանձի ցեց դարձնէին...

Վերջին խօսքերը Շողօն արտասանեց խուլ, կիսա-  
ձայն, որովհետև դեռ վաղ էր այդ սահմանն անցնելը—  
հանգուցեալների յիշատակը դեռ թարմ էր՝ ընդամէնը  
հինգ ամիս էր անցել որբերի հօր մահւան օրից, իսկ  
մօր մարմինը շատ վաղ չէր, ինչ մռայլ սուգով հողին  
յանձնեցին:

Քոյր ու եղբայր հատ-հատ լսեցին Շողօի խուլ ար-  
տասանած վերջին խօսքերը, ու թւաց, թէ առանց այդ  
էլ նրանց բեկւած մանուկ սրտերին մի հուժկու հարւած

դիպաւ, ծակոտեց և թոյնով լցրեց... Քարացած, մեռելա-  
տիպ կանգնած մնացին նրանք տեղներումը... Հէնց այդ  
րոպէին էր, որ գոռգոռալով և ջղաձգօրէն ներս մտաւ  
Գէորը.

— Յո՛ւր ին, ախր յո՛ւր ին էդ Ասսու յերսէն թափած-  
ները... Ը՛սպէս էլ գուլում ու կրակ կեղնի... Էս մէ սհաթ  
ու սպասում ինք, հա՛ սպասում... հմա էդ բաղդաւորների  
ըսկի հաշիւը չէ... փո՛ւ սո... դուք գետինը մտնիք... մկա  
բա մէկ-մէկ չ'տամ դրանց տեղն ու տեղը սատկեցնիմ...

— Քու ձեռներին մատաղ, Գէոր ջան, զանարկ, զանարկ,  
զանարկ թող յաչքների լուսը դուս գայ, ձայն տւեց Շօղօն  
անքտնքալով և նեղսրտած.— Ըդոնց փոր հոգի չկայ, բալա՛  
ջան, բըտի ուտին, մեր ջանը բըտի ուտին ըդոնք... Տէս,  
էն հացի սըլէն մէ տես... բալնիք տւեցի, օր էթային յե-  
րեկւայ փշրանքներից բէրէին, աղուլամիշ էղնէին...\*) հմա  
տես, թէ ինչտեսակ իմ ասածը ծակեցին ու տակները  
դրին... թոփ-թաթա հացերը ջոկեցին ու սըլէն տկուկած \*\*)  
բերին մարդիկը... կը քանդին, բալաս, մեր տունը կը  
քանդին ըդոնք...

Գէորը կատաղած աչքերով նայեց սալային և գոչեց.

— Ըպան... դատած-հազըրած մալ ին գտէ, յընչի՞ չը  
բըտի ուտին ու տիրու չըմգինայ-ինչը քըւին... փշուրը կը  
ծակայ մարդկանց փորը... փո՛ւ սո... ես ձեր էն... գետինը  
պատուի ու էդ բոյովդ մէկ խո՛րն էթաս...

Վերջին խօսքը Գէորը ուղղեց Սաթօին և յարձակեց,  
որ խփէ: Սաթօն մի սուր ճիչ արձակեց և փախաւ տան  
մութ անկիւններից մէկում թագնըւեց. նրա օրինակին  
հետևեց և Պօղոսը: Այդ վայրկեանին խրոխտալով և գոռ-

\*) Թոյն ուտէին.

\*\*) Լիք լցրած:

գոռոցով ներս մտաւ Պետօն. նրա աչքերը կատաղութիւնից ճակատին էին թռել.

—Տօ յո՛ւր ին էն անիծւածները,—գոչեց նա կնոջը իրեն յատուկ այնպիսի խրոխտանքով, որ, կարծես, մի սար փուլ եկաւ:

—Շողօն մինչդեռ իր անէծքախառն պատասխանն էր տալիս տնքստնքալով և կցկտուր խօսքերով, —Գէորը ձայն տւեց մութ անկիւնից.

—Արի Ափօ, հէս ա ըստեղ ին:

Պետօն կատաղի շարժումներով անկիւնը նետւեց, ափեց Սաթօի երկար ծամերը, և քաշ տալով նրան դէպի լոյսը,—մի քանի ուժեղ հարւածներ տւաւ: Սաթօն ճշոցով դուրս պրծաւ նրա ձեռքից և գզգզւած մազերով ու աղիողորմ հեկեկոցով դաշտերը փախաւ. նրան հետևեց և Պօղոսը, որին մշակ թորոսը բռնեց և սլինդ սեղմելով ուժեղ բազուկներում՝ պահեց. իսկ Սաթօն անհետ կորաւ:

Սմբատ Իզբատ

(Կը շարունակուի)



# Շիրակի դաշտերը

(Պոեմից)


Մի անուշ ձայն՝ թովիչ, քնքուշ ու վէտ-վէտ  
Շշնջում է ինձ քոյրօրէն մտերիմ  
Հին-հին ոսկէ ժամանակի մի լեզենդ,  
Երբ մնում եմ ես մեն-մենակ սրտիս հետ...

...Հեռուները, հեռուները լայն ու խոր  
Երազների քարալաններն են զնգում,  
Ո՞վ է երգում տխուր լացով մեղմ օրօր.  
—Այս մարմանդը ինչպէս լաւ է ու անդորր...

Երբ մնում եմ ես մեն-մենակ սրտիս հետ  
Լոյս—հրաշքով վառ-վառում է իմ առաջ  
Հայրենիքիս անհորիզոն, հիասքանչ  
Արձակ դաշտերն, ճանքորդ ջրեր, ճանքաներ,  
Ու չգիտեմ, մոռանում եմ ես անհետ  
Տենդոտ օրլաս ախտոտ յոյզերն մղձաւանջ,  
Եւ իբրև թէ նորից մանուկ եմ ու խենթ  
Մայրիկիս հետ դաշտերիս մէջ լոյս—լեզենդ...

Իս. Իսահակեան:

1069  
15/4




...ՈՒ ՄԵՆՔ ՔԱՅԼՈՒՄ ԵՆՔ

Մեր ճանապարհը՝ փշոտ, դժւարին,  
Մթին գիշերի արհաւիրքներում,  
Ուր ցոլքով պայծառ վառ արշալուսը  
Մեզ փայլատակեց հեռու երկնքում,  
.....Ու մենք քայլում ենք...

Տես՝ այն երգիչը քնարը ձեռին  
Ի՞նչպէս ոլորուն երգը հնչեցրեց...  
Եւ կոյր ամբոխի բիրդ հարւածներից  
Խորհուրդը սրտում յաւիտեան մարեց...  
.....Ու մենք քայլում ենք...

Մեր ճանապարհը՝ փշոտ, դժւարին,  
Արհաւիրքները մեր դիմաց կանգնած,  
Դիմում ենք այնտեղ, ուր վեհ բարձունքում  
Լուսոյ ճաճանչը այնպէս վառ շողաց...  
.....Ու մենք քայլում ենք...

Քայլիւր աներկիւղ. վառ արշալուսի  
Ցոլքը կենսունակ թո՛ղ ոգևորէ,  
Եւ վսեմ երգով լարը քնարի  
Դէպի յաղթանակ մեզ թևաորէ...





## Չ Օ Ն

Էն մեծ երկնքի վառ-վառ աստղերը  
Ես պիտի պոկեմ ծաղիկ փնջելու.  
Էն լազուր երկնի լուսին—թագուհին  
Ես վար կ'իջեցնեմ պսակ հիւսելու...  
Ծաղիկ—աստղերը վրադ սփռելու,  
Թագուհի—լուսնով քեզ պսակելու.  
Եւ, գարնան—աղջիկ, տեսքովդ հիացած՝  
Կուրծքս ալեծուփ ես կը պատառեմ,  
Որ քնար—սրտով քս գովքը երգեմ...

Սուրէն:

\* \*  
\*

Ես դեռ չ'գիտեմ ինձ սիրո՞ւմ է նա,—  
Ու այդ կասկածն է ինձ տանջում միշտ էլ...  
Ա՛խ, համը սիրտս ո՞վ պիտի բանայ  
Եւ յայտնի նրան իմ սէրն ու վշտեր...  
—Ես դեռ չ'գիտեմ ինձ սիրո՞ւմ է նա:

Ես մի օր կերթամ, կերթամ նրա մօտ,  
Նրա մօտ լալու սիրտս սիրակէզ...  
Կասեմ — «չեմ կարող, ես սիրում եմ քեզ,  
Չեմ կարող ապրել ես լոկ ցնօրքով...»  
—Ես մի օր կերթամ, կերթամ նրա մօտ:

Անուրջ:

# Վ Ր Է Ժ

(Պատմաճփ)

## I.

Մի գիւղ էր՝ մի Սաքօ: Բարձրահասակ, թիկնաւէտ, խոշոր սև աչքերով, արևառ դէմքով երիտասարդ էր նա: Լայն ճակատի ստորին մասում երկու թաւ յօնքեր տալիս էին նրան լեռնականի վեհ և ազդու դէմք: Երբ նրան յիշում եմ, պատկերանում է նա ինձ կարճ արխալուղը հագին, նեղ դաշոյնը գօտկից կախ, փոքրիկ գդակը ծուռ ու յետ գցած, ճակատն ամբողջովին բաց:

Նա նոր էր վերագարձել գինւորութիւնից. նրա վերագարձից յետոյ գիւղից այլևս տաւար չէին յափշտակում: Գիւղացիք նրա արևով երդւում էին: Նա հանել էր գինւորական զգեստն ու տրեխները հագին դաշտային աշխատանքներով էր զբաղւում: Նախկին ընկեր-գինւորակիցները պատահելիս գինւորական պատիւ էին տալիս նրան: Երբ գիւղը որևէ աստիճանաւոր կամ ոստիկան էր գալիս, Սաքօն նրանց առաջ համարձակ կանգնում և բացատրում էր՝ ինչ հարկաւոր էր լինում:

Ընկեր-գինւորները գովասանքով էին խօսում նրա մասին և պարծանքով յիշում նրա ծառայութիւնից զանազան արկածներ. նրա արձակած գնդակը նսլատակից չէր վրիպում, քննական հրացանաձգութեան ժամանակ առաջին մրցանակն էր ստացել, իսկ տուն վերագառնա-

լիս նրան մի արագածիգ հրացան և խանչալ էին պար-  
զուել:

Նրա զինւորակից ընկերներից մէկը մանաւանդ սի-  
րուս էր Սաքօի համարձակութիւնից պատմել:

—Նա ընդհանուր զօրախաղի ժամանակ «ВЪ ШТЫКИ!»  
կամանդ արեց, ոգևորւած պատմեց նա մէկ օր:—Ամ-  
բողջ վաշտը նրան լսեց:

Ես խնդրեցի պատմել այդ դէպքը:

—Այն ժամանակ հայ զինւորները առանձին վաշտեր  
էին կազմում: Վերջին ընդհանուր զօրախաղն էր. նշա-  
նակւած էր բերդ գրաւել: Բերդը բաւական հեռաւորու-  
թեան վրայ էր գտնւում: Պաշարածներին օգնութեան  
պէտք է գար ուսական մի վաշտ. իսկ յարձակում գոր-  
ծողը մեր վաշտն էր: Մենք գտնւում էինք գետի ափին,  
իսկ կամուրջը, որը գետի մի ափը միացնում էր բերդի  
հետ, բաւականին հեռու էր: Ով առաջինը կամուրջն անց-  
նէր, յաղթութիւնը նրանն էր: Ամբողջ օրը հրացանածգու-  
թեամբ ճանապարհ էինք բացել և կէսօրին մօտեցել կա-  
մուրջին: Թշնամին հակառակ կողմից կրակ էր բացել մեր  
դէմ և շտապում էր շրջան գործելով բերդը բարձրանալ  
ու մեր ճանապարհը կտրել: Բայց մեր առաջին շարքերը,  
որոնց մէջ էին Սաքօն և իր նման մի կտրիչ՝ Սօսը,  
կատաղի յարձակմամբ նրանց առաջը կտրեցին ու միջոց  
տւին ամբողջ վաշտին կամուրջն անցնելու: Մենք «ուռ-  
ուս» աղաղակելով նոր էինք սկսել հակաշարձակում գոր-  
ծել թշնամու վրայ, երբ յանկարծ Սօսը գնդակահար գե-  
տին փուլեց: Սկզբում ամենքս մնացինք զարմացած, ո-  
րովհետև մեր փամփուշտներն առանց գնդակի էին, ու-  
րեմն ռետեղից կարող էր այդպիսի նամարդութիւն լինել:  
Բայց քիչ յետոյ զգացինք, որ Սօսը դաւադրութեան զոհ  
է: Մեր կատաղութեանը չափ չկար, մենք գնդակներով

փամփուշտներ չունէինք, ապա թէ ոչ՝ դաւադիր հակա-  
ռակորդին հողի հետ կըհաւասարեցնէինք: Հակառակորդ  
վաշտը օգտուելով մեր շփոթութիւնից՝ յաղթութիւն տա-  
նելու վրայ էր, երբ յանկարծ լսեց մի հուժգու ձայն.

— Братцы, въ штыки!

Սաքօն էր դա: Ամբողջ վաշտը, ինչպէս մի մարդ,  
լսեց նրան. 15 ֆունտանոց հրացանները տաշեղների պէս  
ցցեցին օդում և իջան: Արիւնն աչքներս առած՝ մենք  
ոչ թէ քայլում, այլ թռչում էինք՝ սւիճները նամարդնե-  
րի կուրծքը մխելու:

Այդ միջոցին լսեց նահանջի շեփորը: Մենք առանց  
ուշք դարձնելու՝ առաջ էինք թռչում թշնամու վրայ: Նը-  
րանց շարքերն արդէն խախտուել, իրանք էլ սարսափած  
ցիրուցան էին լինում:

Տեսնենք՝ գնդի հրամանատարը իր շքախմբով արշա-  
ւակի հասաւ մեր առաջը և հրամայեց կանգնել:

Մենք կանգնեցինք:

— Ձեզ ո՞վ հրամայեց այդպիսի յանցանք գործել,  
գժեր, դարձաւ նա մեզ:

Շարքից դուրս եկաւ Սաքօն, զինւորական պատիւ  
տուաւ և ասաց: «Ես հրամայեցի, որովհետև մեր ընկերո-  
ջը սպանեցին»: Այդ ասելով նա պատուիրեց առաջ բերել  
Սօսի դիակը, դնդակը ճակատին էր կպել. նա իսկոյն  
շունչը փչել էր:

Թէև գնդապետը, ինչպէս երևում էր, կատարել էր  
մեր վարմունքից, բայց ոչինչ չարաւ, միայն ցաւ յայտ-  
նեց այդպիսի թիւրիմացութեան համար և խոստացաւ  
խիստ քննութիւն կատարել ու յանցաւորին գտնել: Յետոյ  
նա երկար խօսաց զինւորական պարտականութիւնների  
մասին, Սօսի դիակը հրամայեց տանել պատերազմա-  
կան հիւանդանոց, մի օր մեզ ազատ թողեց, որպէսզի

նրան թաղենք: Մենք յողնած, տխուր և վիրաւոր սրտե-  
րով վերադարձանք բանակատեղին: Մի շաբթից յետոյ  
Սաքօն և մեր ամբողջ վաշտը յանդիմանութիւն ստացանք  
ինքնագլուխ գործելու համար: Իսկ թէ վրայ չէին հասել,  
մենք գիտէինք՝ թէ ինչպէս պէտք է լուծէինք Սօսի վրէ-  
ժը, վերջացրեց իր պատմութիւնը զինւորակից ընկերը:

Այսպէս էր Սաքօն.—քաջ, համարձակ, բաց ճակա-  
տով. նա վերին աստիճանի ինքնասէր և խիստ էր. ոչ մի  
վիրաւորանք չէր տանում, այդպէս էր պահանջում և իր  
ընկերներից:

Նա ամուսնացած չէր. դրա համար էլ գիւղում շա-  
տերն աչք ունէին նրա վրայ:

## II.

Ազիզենց Սիրունը հասած աղջիկ էր, տարիքը 18-ից  
արդէն անց. նա գեղեցիկ չէր, բայց գրաւիչ էր. բարձ-  
րահասակ, թուխ գէմքով, աչքերը սև ու խորունկ հայեաց-  
քով: Առաջին ընկերից նա տպաւորութիւն չէր թողնում,  
բայց երբ երկար և ուղիղ նայում էր քեզ, որ հազիւ էր  
պատահում, զգում էիր, որ նրա աչքերում կիրքը մի ար-  
տասովոր կատաղութեամբ է բորբոքում. նա զիմացինին  
քաշում, գերում էր՝ այդ կրքին մասնակցելու: Քիչ էր  
պատահում, որ նա ուղիղ մարդու երեսին նայէր. միշտ  
հայեացքը հեռուն, կամ գետնին գցած էր լինում: Կա-  
նայք նրան չէին գովում: Նրանք ծածուկ դիտում էին  
Սիրունին, երբ նա վառւած աչքերը ուղղում էր որևէ  
տղամարդու, բայց իր հայեացքը նա միշտ ծածկում էր  
ուրիշներից:

Սիրունը սիրեց Սաքօին. սիրեց աւելի, քան երբևիցի  
մի աղջիկ սիրած կըլինէր իր ընտրածին: Երբ Սաքօն վե-

րադառնում էր հանդից, գիւղի աղջկերքը շինծու բացա-  
կանչութեամբ նրան հանդիպում ու փախչում էին, իսկ  
Սիրունը չէր թագնըւում. ընդհակառակն՝ նա կանգնում,  
բորբոքած հայացքը սևեռում էր նրա վրայ. այն ժամա-  
նակ պէտք էր տեսնել նրա թափանցող հայեացքի խո-  
րութիւնն ու ցոլացած կայծերը:

Սաքօն նրա հայեացքներին չէր սլառասխանում, Սի-  
րունը վիրաւորանքից այրւում, կատաղում էր. նրա ներ-  
սը ալեկոծւում, նա պատրաստ էր վագրի կատաղութեամբ  
յարձակել Սաքօի վրայ: Ներքին յուզմունքից ուժաթափ,  
հեալով նա նստում էր մի անկիւնում և երկար այդպէս  
մնում:

Սիրունը մի կնոջ միջոցով իմաց տւաւ Սաքօին իրեն  
այրող կրակի մասին, իր անհուն տանջանքների ու սի-  
րոյ մասին, որոնք իր ներսն էին տոչորում:

Սաքօն չցանկացաւ Սիրունին կին առնել: Սիրունը  
յուսահատուէց. յուսահատութիւնը տեղի տւաւ կատաղու-  
թեան և նա վճռեց՝ ինչ գնով լինի՝ տիրանալ Սաքօին,  
չթողնել նրան՝ ուրիշ աղջիկ առնելու.

Գիւղում ապրում էր կալածատէր թուրք բէկը, նրա  
«ամարաթը» գտնւում էր գիւղի վերևում՝ առանձնացած:  
Նա ունէր բազմաթիւ քաղցած ծառաներ, նրա տունը եր-  
թևեկում էին շատ կասկածելի ջահելներ, նրանց մէջ էր  
Ասադը, բէկի ազգականը:

Գիւղում մի քանի տներ մօտ յարաբերութիւն ունէին  
բէկի հետ, նրանց հարսներն ու աղջկերքը յաջախ ցերեկ-  
ներն անց էին կացնում այնտեղ, դրանք օգնում էին բէ-  
կի տնային աշխատանքներին և համարձակ ներս ու դուրս  
էին անում նրանց տունը: Գիւղացիք այդ ընտանիքներին

չէին սիրում, նրանք նրանց մասին շատ բաներ էին խօսում: Նրանց աղջկերքը համարձակ էին, գիւղում չէին առնում, ուրիշ գիւղերից էին գալիս նրանց հարս տանում:

Ազիզենք էլ մօտ էին բէկի տան հետ, ամբողջ օրերով նրանք այնտեղ էին լինում, գիւղում պատմում էին, որ նրանց մեծ հարսը բէկի հետ մօտ է, որ այդ բանը յայտնի է նոյն իսկ նրանց տանը:

Սիրունն էլ էր գնում բէկի տուն, նա զանազան տնային գործեր էր կատարում: Ասադը հաւանում էր Սիրունին. նա շարունակ հետևում և քաղցր խօսքեր էր ուղղում նրան: Նա մեծ հարսի միջոցով շատ էր աշխատում կապ հաստատել Սիրունի հետ. խնձոր և չոր միրգ էր բերում քաղաքից երկուսի համար էլ:

Սիրունը հաւանում էր Ասադին, բայց գիտէր՝ որ հայ աղջիկը թուրքի հետ չէ ամուսնանում. նա Սաքօին էր սիրում:

Ասադը մեծ հարսի միջոցով իմացաւ Սիրունի գաղտնիքը. նա հասկացաւ, որ Սիրունի ուշքն ու միտքը Սաքոյի հետ է: Իսկ Ասադին յայտնի էր, որ թուրքը, ինչ սիրտն ուզէ, պէտք է վերցնէ, եթէ չտան՝ պէտք է գողանայ:

Սիրունը դադար չունի. նա Սաքօի սիրուց այրւում, տանջւում է, ներքին յուզմունքից բռնկւում, կատարում է:

Այդպէս անցաւ ամբողջ գարունը, այդպէս էր անցնում և ամառը:

Գիւղացիք զբաղւած են դաշտային աշխատանքներով, մեծից մինչև փոքրը դաշտն են շտապում, եթէ հնար լինէր, ձողերին էլ գլխարկ կը հագցնէին դաշտ տանելու:

Բայց Ազիզենց տնեցիք քիչ են դաշտ դուրս գալիս, քանի որ է՛ նրանք գնում գալիս են քաղաք: Մի բան էր կատարւում նրանց տանը: Թէ ինչ՝ գիւղն այնքան էլ տեղեակ չէր, որովհետև ծածուկ էր պահւում ամեն ինչ:

Մէկ օր հաշտարար միջնորդը եկաւ գիւղ, կանչեց Սաքօին և Ազիզենց Մկրտչին:

Սաքօն կարծելով, որ թարգմանի պաշտօն պիտի կատարէ, շտապեց: Միջնորդը ճանաչում էր նրան, դրա հազար էլ հէնց առաջին անգամից ծիծաղելով դարձաւ նրան և ասաց.

— Սաքօ, եկել եմ քեզ պսակելու, հարսանիքումդ պէտք է մի լաւ քէֆ անեմ:

Հաշտարար միջնորդը վաղուց կովկասումն էր ապրում. գինւորական ծառայութիւնը թողած աստիճանաւոր էր, նիստ ու կացով և սովորութիւններով արդէն կովկասցի էր դարձել: Նա շատ մօտ էր գիւղացիներին, յաճախ ընծաներ էր ստանում նրանցից, քիչ թուրքերէն գիտէր, մի քիչ էլ հայերէն էր հասկանում: Նա ամեն բանի մէջ համարեա խառնւում էր. նա իր դերն այդպէս էր հասկանում, իսկ գիւղացիք, որ վարչական բաժանմունքերի մասին հասկացողութիւն չունէին, «աղի» վարմունքը բնական և օրինաւոր էին համարում:

Սաքօն չհասկանալով միջնորդի իրեն ուղղած խօսքերը, ժպտաց և աւելացրեց.

— Իրաւունք ունիք, առանց ձեզ հարսանիք ի՛նչպէս կանեմ:

— Շատ լաւ, որ այդպէս հեշտ համաձայնում ես. ինձ էլ գլխացաւանք չես պատճառում:

Սաքօն զարմացմամբ նայեց միջնորդին. իր հարսանիքով ինչո՞ւ պիտի գլխացաւանք պատճառէր նրան:



— Ինձ ասել են, որ նշանածդ աղջկանն այլ ևս չես ուզում առնել, ես ասացի Սաքօն այդպիսի բան չի անիլ:

— Ես ի՞նչ ասում եմ նշանել, զարմացմամբ հարցրեց Սաքօն.

— Աղիզենց Մկրտչի աղջկանը. հօր, կարծում ես՝ չըզիտեմ:

Իր անունը լսելիս Մկրտչը գլուխը խոնարհեց:

— Սուտ է, ես ոչ մէկի աղջկանը չեմ նշանել:

— Դէհ, Սաքօ, այդ արածիդ արդէն ես չեմ հաւանում: Մարդու աղջկանը խայտառակել ես, այժմ յետ ես կանգնում, դա մեծ յանցանք է: Գիտես, որ ռուսական օրէնքը այդպիսի դէպքում չէ ներում: Դու հօ ծառայած ես, զիտես:

— Սուտ է. վրդոված գոչեց Սաքօն. ես այդ աղջկայ երեսն էլ չեմ նայել: Ես նրան չեմ նշանել, հարցրէք տէրտէրին:

— Օրէնքով չես նշանել, բայց աւելի խիստ բան ես արել. դու ապրել ես նրա հետ, ցածր ձայնով ասաց միջնորդը:

Սաքօն քիչ էր մնում գժւէր. ինչպէ՞ս թոյլ կրտար այդպիսի յանցանք. ինչպէ՞ս են իր մասին այդպիսի ստոր սուտ յօրինում:

— Ո՞վ է իմ մասին այդպիսի սուտ տարածել, անունը յայտնեցէք, ես նրա գլուխը հէնց ձեր առաջ կըթռցնեմ:

— Ինչո՞ւ արիւն թափել. ուզում ես՝ աղջկանը կանչենք այստեղ:

— Հա՛, կանչեցէք, տաքացած ասաց Սաքօն, — այս րոպէին կանչեցէք:

Եկաւ Սիրունը. նրան ուղեկցում էր իրենց մեծ հարսը:

— Մկրտիչ, դու գնա դուրս, հրամայեց միջնորդը:

Մկրտիչը խոնարհութեամբ դուրս գնաց:

— Աղջիկս, դարձաւ միջնորդը Սիրունին թուրքերէն, առանց քաշուելու ասան, Սաքօն քեզ հետ ապրել է. եթէ չէ ապրել, նա ազատ է, կարող է քեզ չառնել:

— Այո, պատասխանեց Սիրունը հայեացքը գետնից բարձրացնելով, — երկու շաբաթ առաջ, երբ ներքևի այգուց վերադառնում էինք, մութն էր արդէն, ես յետ էի մնացել. «նա» ինձ կանչեց, կանգնեցրեց, տարաւ աղբրի ներքև գտնուած այրը և...

Սիրունը չաւարտեց իր խօսքը:

Սաքօն բարկութիւնից չգիտէր՝ ինչ է կատարուում իր շուրջը. նրան հազիւ զսպում էր միջնորդը:

— Յետոյ, յետոյ, շրթունքները լպստելով հարցրեց միջնորդը. մի ամաչիր, ասան. ինձ պէտք է բոլորը պարզ պատմես:

— ... Եւ ասաց, որ ինձ կին պիտի առնի,

... դարձեալ չվերջացրեց Սիրունը:

— Յետոյ, յետոյ, նա քեզ չգրկեց, չհամբուրեց, ասան բոլորը ճիշտ, ոգևորուած հրամայեց դատաւորը.

— Բոլորը ճիշտ ասան, էլի, բոթեց նրա կողքին մեծ հարսը, ինչի՞ ես ծածկում:

— Յետոյ իմ կուսութիւնը խախտեց, գլուխը բարձր և համարձակ ասաց Սիրունը:

Նրա շփոթութիւնն անցել էր արդէն, կեղծ ամօթը ևս տեղի էր տւել սովորական կրքին: Նա այժմ հանգիստ էր:

— Ռուսական օրէնքով այդպիսի աղջկանը պէտք է առնել, յայտնեց իր վճիռը խորհրդաւոր կերպով միջնորդը: Իսկ ես իբրև ձեր հայրը, խորհուրդ եմ տալիս այն բանը չտարածել գիւղում, երկուսիդ համար էլ վատ է:

—Սուտ է, համարեա, գոռում էր Սաքօն. ես նոյն իսկ չեմ տեսել նրան:

Միջնորդը ձեռքով նշան արաւ լռելու ապա շարունակեց.

—Շատ փորձանքների կարող է հանդիպել երիտասարդը. նրա արիւնը եռում է, մենք ծերերս էլ երբեմն ազատ չենք այդպիսի մեղքերից, քեզ ես մեղադրել չեմ կարող, բայց կընեղանամ, եթէ թոյլ տաս դատարան դիմելու:

Սուտ է այդ, ատամները կըճտելով մոնչում էր Սաքօն, մարդասպանութիւն կը լինի, արիւն կըթափուի...

Միջնորդը լռեցրեց նրան, բացատրելով նրա ասածների համար լինելիք պատասխանատուութիւնը:

—Մկրտիչ, կանչեց նա, այլ ևս դատարան դիմել հարկաւոր չէ, ամօթ է քեզ համար էլ, Սաքօի համար էլ, շուտով հարսանիքը կանէք, կըվերջացնէք:

Այդպէս վերջացրեց միջնորդը: Մկրտիչը գլուխը խոնարհեց և աղջկայ ու հարսի հետ դուրս գնացին:

—Այս երեկոյեան ես և փեսացուդ ձեր տանը կըլինենք, կանչեց նրանց լետեից միջնորդը:

Սաքօն կարծես խայթւեց այդ խօսքերից:

—Սուտ է, ես յանցաւոր չեմ, ես կին չեմ առնիլ նրան, կատաղած աղաղակում էր նա:

—Հանգստացիր. գիտե՞ս, որ դրա համար բժշկական քննութիւն կայ, եթէ սլարզւի արածդ...

Սաքօն դողաց այդ բացաղբութիւնից. զայրոյթը, վիրաւորանքը ճնշում էին նրա սիրտը: Այն հպարտ Սաքօն իր աչքում ոչնչացել, անպէտքացել էր:

Գժլածի պէս դուրս գնաց նա: Ի՞նչ անէր՝ ինքն էլ չգիտէր:—Բայց ես չեմ առնիլ նրան, ինչ ուզում է լինի... Իսկ ինչ ասաց միջնորդը՝ բժշկական քննութիւն...

և եթէ պարզի, որ նա «աղջիկ» չէ. Տէր Աստուած ի՞նչ խայտառակութիւն. այն ժամանակ կարելի՞ է լոյս աշխարհ դուրս գալ: Նա սարսափում էր այդ մտքից:

Այդ երեկոյ միջնորդը մենակ, առանց Սաքօի հիւր էր Ազիզենց տանը, նա գիշերն այնտեղ էլ քնեց:

Սաքօն չգիտէր՝ ինչ անել. նա ընկեր-բարեկամի պատմում էր ճնշւելով և խորհուրդ հարցնում:

Ամենքն խորհուրդ էին տալիս ամուսնանալ ու վերջ տալ այդ բոլորին. իսկ նրա յետևից ժպտում և զանազան ենթադրութիւններ ու եզրակացութիւններ էին անում: Այդ բոլորը տարածւեց գիւղում:

— Վանի, լսել ես նոր լուրը, դարձաւ գիւղացի Սաչատուրը իր ընկերոջը այգում. ասում են՝ Սաքին Ազիզենց Սիրունին մի շաբաթ է փախցրած պահում ա իրանց բաղում:

— Չէ ան... և երկուսը քահ-քահ ծիծաղեցին:

— Գիւլխազ, դարձաւ Մանիշակը իր հարևանուհուն աղբրի մօտ. աղջի տեսնում ես՝ ինչ ա պատահել. Աստուած քարէ կարկուտ ա աղալու մեր գիւղի գլխին. բա չես ասիլ, Ազիզենց Սիրունը մի երեխայ փչացրել ա, միւսն էլ այսօր վաղը կըծնէ. ասում են՝ մի տարուց աւել է Սաքին հետն ապրում է:

Գիւղում հռչակւած էր ծերունի Գրիգորը իր իմաստութեամբ: Նրան էլ հասաւ այդ պատմութիւնը:

— Հ'ը, Գիւլ-ապրէր, քու ժամանակն էլ ըտըրէնց պէնէր պըտաըում էի՞ն, հ'ը, ի՞նչ կասես, հարցրին մի քանի երիտասարդներ:

Ծերունի Գրիգորը նստած մի երդիկի լանջին՝ արևի տակ տաքանում էր՝ գլուխն անդադար տմբտմբացնելով: Նա երկար չէր պատասխանում, միայն ժպտում էր: Երբ միջնորդի առաջ յայտնած «խոստովանութիւնն» էլ լսեց,

Գրիգոր ապերը հազաց և գողգողացող ձեռքերով իր ցուպի ծայրով գետնի վրայ զանազան գծեր փորելով ասաց.

— Աթալարի (նախահայրերի) խօսք ա. էն կընիկարմատը որ իրան «առակ»-ի մասին համարձակ խօսում ա, նշան ա, թա մաքուր չէ, մին քանի մարդու իրես ա տեսալ:

Պօսքը վերաբերում էր Սիրունին:

Աշնուհետև լսեցի, որ Սաքօն առել է Սիրունին. գիւղում ամեն օր տարածող խայտառակ պատմութիւններին վերջ տալու համար՝ Սաքօն վճռեց ամուսնանալ Սիրունի հետ:

Մի քանի ժամանակից յետոյ ես հանդիպեցի Սաքօին. նա մէջքից կորացել էր, մռայլւել և մարդկանց չէր նայում: Նրա հպարտութիւնն անյայտացել էր:

Աշնան վերջերին էր. գիւղացիք այգիներից ժողովում էին իրանց գործիքներն ու կամաց-կամաց հաւաքում գիւղ: Եղանակը մռայլւել էր. երբեմն-երբեմն միայն արեւը մի քանի ժամով երկնքում երևում է:

Երեկոյեան դէմ էր: Սաքօն և Սիրուն վերադառնում էին այգուց:

Նրանք լուռ էին. առջևից քայլում էր Սաքօն, յետեւից՝ Սիրունը: Նա միշտ խուսափում էր Սաքօի դէմքին նայելուց. այդպէս նա հանգիստ էր:

Եղանակը վատանում էր, սև-սև ամպեր էին կուտակւում երկնքում, երբեմն հեռւից որոտ—դղրդոց էր լսւում, տարածւում հեռո՛ւ-հեռո՛ւ, ու կամաց-կամաց խլանում: յանկարծ անձրևը սկսեց այնպիսի սաստկութեամբ թափւել, որ այլևս տուն շտապել անկարելի էր, պէտք էր պատսպարան գտնել:

Նրանք ներս վազեցին աղբրի ներքևում գտնւած այ-

ըր: Սաքօն նստեց մի քարի վրայ, հայեացքը ուղղեց դէպի դուրս, իսկ Սիրուեն սկսեց խուրջինի կապիչներն ամրացնել. նա այդպէս հանգիստ էր, քանի—որ զբաղւած էր, թէև կապիչներն ամուր էին:

Հուռ էին, յորդ անձրևը աղմուկ էր հանում դրսում, իսկ երբեմն որտան էր թնդացնում երկինքը և կայծակը ակօսում օդի տարածութիւնը:

Սաքօի մտքերը ցրւած էին. — Հաւ է, որ այրը մօտ էր, թէ չէ՝ անկարելի կը լինէր պատասպարան գտնել. որքան լաւ է այդ այրը, մտածում էր նա: Եւ այրը կամաց-կամաց 'ի մի ժողովեց ցրւած մտքերը... Նա դրանից յետոյ յիշեց ամեն բան... Հաշտարար միջնորդը, նրա դատը, զիւղում տարածւած տգեղ պատմութիւնները, իր հարսանիքը, ապա յանկարծ միտքը թռաւ մինչև Կուրի ափերն ու իր զինւորութիւնը, ապա ընդհանուր զօրախաղը, խեղճ Սօսը և իր «հրամանը»... Ամենը, ամենը պատկերացաւ իր առաջ. նա այնպէս էր զբաղւած իր մտքերով, որ եթէ նայող լինէր, նրա դէմքի վրայ պարզ կընշմարէր ներքին յուզմունքը, ոգևորութիւնը, զինւորական խաղերի պատճառած բաւականութիւնը, արձակած «հրամանը» և իր կատաղութիւնը: Յանկարծ մտքերի թելը ուզեց կըտրւել և նա դարձաւ կնոջը.

— Սիրուեն, արդէն ամեն բան վերջացած է, դու իմ կինն ես. ճիշտն ասա՛, ո՞վ քո կուսութիւնը խախտեց: Դու էլ գիտես, որ ես քեզ հետ չեմ եղել, որ ես անմեղ էի. բայց ո՞ւմ յանցանքը դու ինձ վրայ ձգեցիր:

Նրա ձայնը կերկերում էր. նա հազիւ էր բառերն արտասանում:

Սիրուենը յանկարծակիի եկած՝ լսելով նրա խօսքերը, նախ դողաց, ապա կարծելով որ իր հնարովի խօսքերը

խոստովանութիւնը կը հանգստացնեն Սաքօին, լացակամած արտասանեց.

— Ես ստեցի. ես քեզ սիրում էի, այդպիսով ուզեցի քո կիւնը լինել:

— Բայց ո՞վ էր խախտել քո կուսութիւնը, որպիսի յանցանքը դու ինձ վրայ բարկեցիր, ո՞վ է քեզ հետ ապրել մինչև ամուսնանալդ, համարեա գոռալով արտասանեց Սաքօն տեղից վեր թռչելով:

Սիրունը սարսափահար, ամուսնու կատաղութիւնից ազատւելու համար ամեն բան խոստովանեց:

Նա պատմեց իր տանջանքները, իր յուզումները, իր յուսահատութիւնն ու վճիռը՝—ինչ գնով ուզում է լինի՝ Սաքօին տիրանալ-- և ապա գործադրած միջոցը: Նրան վաղուց հետևում էր Ասադը. մեծ հարսը օգտւելով իր մտադրութիւնից՝ նախ բէկի մօտ տարաւ, ապա Ասադի:

— ... Բէկի և Ասադի յանցանքը քեզ վրայ գցեցի...

Սաքօն պատմութեան ընթացքում յիշում է, որ մի բան նրան խեղդում էր, որից սկսեց նա դողալ, յետոյ ձեռքը անգիտակցաբար խանչալի կոթը շօշափեց, այնուհետև նա ոչինչ չի յիշում...

Նա ուշքի եկաւ այն ժամանակ, երբ Սիրունի մարմինը կտոր-կտոր թափւած էր այրի լատակին իր ոտքերի մօտ...

Փէշով սրբեց խանչալի արիւնը, դրեց պատեանը և առանց գիւղը վերադառնալու գնաց քաղաք, ներկայացաւ գաւառապետին ու պատմեց ամեն բան:

Նրան ուղարկեցին բանտ:

Նրան դատեցին. ամբողջ դիւղը հաւաքւել էր և ամենքը ափսոսում էին, որ Սաքօի նման մի ջահիլ զոհ գնաց խաբեբայութեան: Ամենքը միաբերան վկայում էին, որ Սաքօն մաքուր երիտասարդ էր: Նա իր կեանքում

յանցանք չէր գործել: Ազիզենց հարևանուհին պատմեց,  
որ իր աչքովը տեսել է Սիրունին Ասադի հետ, որ բէկի  
աղախիններէց մէկը բոլոր եղելութիւնը մանրամասն  
սլատմել է իրեն: Իսկ երբ հերթը եկաւ մեծ հարսին և  
Ազիզենց Մկրտչին, նրանք էլ չկարողացան ծածկել ի-  
րանց արածը: Այնուամենայնիւ Սաքօին երեք տարւայ աք-  
սորի դատապարտեցին:

Ես նրան վերջին անգամ պատահեցի դատարանում:  
Նա հանգիստ լսեց վճիռը, դարձեալ հպարտութեամբ  
զլուխը բարձրացրեց և դատաւորին ասաց.

— Ես մարդասպան չէի. ինձ մարդասպան դարձրին  
սրանք, և նա ցոյց տւեց այնտեղ հաւաքւած ամբոխին:

Սուրէն



## Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

(Հասլաձևեր «Սարերի Սերը» պօեմից)

Ասում են՝ իբրև էն սէգ սարերում,  
Ուր տեսել եմ իմ արևն առաջին,  
Իբրև երկնային էն վէս վայրերում  
Կայ մի հրաշալի ծաղիկ առանձին.

էդ ծաղիկն էնքան, ասում են, դժւար,  
Դժւար է բացւում, որ վառւում իսկոյն  
Իր ցաւ-տանջանքից, վառում է թշւառ  
Եւ իր հարևան շատ ծաղիկ ծիծղուն...

Ու շատ են տեսել, երբ իջնում է վէս  
Սարերի գարնան գիշերն առաջին,  
Վառւում է ծաղիկն էն սուրբ մոմի պէս,  
Հանգչում անդրանիկ արևաբացին...

էն լոյս ծաղկի տակ միշտ մի անձնուրաց  
Սարի-Սիրուն կայ, որ քնած է պաղ,  
էն Սէրն է Սարի—ծլում անմուրագ  
Սիրունի սրտից, թառամում է վաղ...

---

Ա՛խ, էն սարովը մի սև ձիաւոր,  
Ձիաւոր անցաւ.

Սարի էս կուռը եղնը վիրաւոր,  
Վիրաւոր անցաւ...

Ձան, անբախտ քուրիկ, էն սարում հպարտ  
Մի վարդ է ծաղկում,

Ձիւան եղնիկի արնովը զւարթ,  
Ձւարթ է ծաղկում...

Եղիա Տէր-Հայրապետեան:

## Մ Ի Լ Ի Ն Ի Ր

Անդորր կաց, տոկա՛, այս էլ համբերէ,  
Մի լինիր այսչափ շւար ու մոլոր,  
— Գիշերը կը գայ՝ հանգիստ կը բերէ,  
Ու կը մոռացւին ցաւերդ բոլոր...

Հողի հետ մէկտեղ և ցաւն է ծնւել,  
— Մարդ պէտք է քաշէ սոյն գիշեր և զօր,  
Հողի հետ մէկտեղ և ցաւն է սնւել,  
— Նա կը մոռացնէ վշտերդ բոլոր...

## Մ Ի Ե Ր Գ Ի Ր . . .

Շանթ ու փոթորիկ պատեցին երկիր,  
Քար-կարկուտ թափւեց իմ գլխի վրայ...  
— Մեռած ցնորքի երգը մի երգիր,  
Ա՛խ, անհետ կորաւ յիշատակ նրա...

Ես նրան դրի վիհը գետնափոր,  
Մանկական դողդոջ ձեռքերիս առած...  
— Մեռած ցնորքին մի երգիր օրօր,  
Ա՛խ, վաղուց արդէն նա հող է դառած...

\*  
\* \*

Տառապել եմ ես օրեր ու տարիք  
Մի սուրբ կարօտով ցնորքի, լացի,  
— Բայց դու փակեցիր իմ դուռ ու երթիկ,  
Փշրեցիր սիրտս խաղով կանացի...

Եւ սէրս հիմա լալկան քամու պէս  
Շրջում է մոլոր՝ գիշեր ու ցերեկ,  
Դուռդ է ծեծում, կանչում սրտահեծ,  
— Բայց, ախ, չես լսում, չես բանում երբէք...

\*  
\* \*

Ի՞նչ խորհուրդ է այս... ինչո՞ւ ես լռել,  
Եւ զօր ու գիշեր անթարթ ու անքուն  
Արծաի թևերըդ իմ գլխին փռել...  
— Ի՞նչ ես բերում իմ տառապած հոգուն...

Ո՞ւր է մանկութեան երազ լուսազարդ,  
Ո՞ւր են երեկւայ երգերըդ այն պերճ,  
Գալիք օրերը սիրուն ու զլարթ,  
Եւ խոստումներըդ անվերջ ու անվերջ...

Սմբատ Իւզբաճ:

## ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԵՐԳԸ

### I.

Այն գարունը թիթեռնիկների մի անազին բազմութիւն լցրել էր Ապշերոնեան երկրի այս հանքաշրջանը, ուր բնութիւնն այնպէս աղքատ է ու անզարդ: Մի կատարեալ մերկութիւն է ներկայացնում նա և այդ անլուր մերկութեան մէջ այդ թրթռուն նորելուկների անսովոր ներկայութիւնն այս միակերպ երկրի մարդկանց միապաղաղ ուղեղներում հրէշաւոր բացատրութիւններ էր գտնում...

Եւ այս թրթռուն հիւրերը թէև այլ բուսազարդ երկրների թիթեռների գունազեղութիւնը չունէին, սակայն իրենց աշխոյժ ու խելացնոր խաղով հսկայ նաւթաբուրգերի արանքներում, բարձրաբերձ ծխնելոյզների շուրջը, նաւթամբարների վրայ խայտալով լցրել են բոլորի սրտերը մի թովիչ աշխուժով, մի անսովոր թարմութեամբ, կարծես կամենալով ցոյց տալ բոլորին, որ բացի փողից և ունեցւածքից, բացի աշխատանքից ու հանգստից, բացի տիրոջից ու բանւորից խելացնոր ազատութիւն էլ կայ այս աշխարհում խելակորոյս ազատների համար, որոնց միօրեայ ազատութիւն աւելի թանգ է, քան տարիների կուռ ստրկութիւնը:

Ու բոլորն ուրախ էին, բոլորն էլ խայտում էին այդ թրթռուն էակների պէս: Հայեացքներ էին, որ գրավւել էին արտասովոր տեսարանով, սրտեր էին, որ պարարւում էին այդ սքանչելի խրախճանքով...

Սքանչանքի հետ զուգընթաց գնում էր և գործը, որ

այժմ աւելի աշխոյժ ու աւելի թեթև էր կարծես: Երբ սիրտը թրթիռ ունի, գործի ծանրութիւնն ո՞վ է զգում: Ու մերկ բլրի փեշերին եռում էր աշխատանքը: Շախտաների մօտ, որոնց ցից-ցից կատարների շուրջն էլ պար էին բռնել թիթեռնիկները, երկրի կրճքից քանդած հանած հողաթմբերի վրայ նստել էին շախտափոր բանւորները. որը պատրաստուում էր ներս մտնելու, որը նոր շախտայից դուրս եկած մաքրում էր ցեխոտ ու նաւթոտ մարմինը նոյն ցեխով ու նաւթով, ապա չոր հողով... Ու թեթևասլիկ թրվուկները զեփիւռի պէս սրա ու նրա երեսն էին շոյում իրենց թաւ թևերով, կամ մերկ կրճքերին ու մէջքերին զարկում թեթևակի: Շախթափոր Սելիմը յանկարծ մի թրվուռն փոքրի բռնեց՝ և գոչեց. —Օ՛, որքան սիրուն է...

—Ես երբէք այս քարուքանդ երկրում թեթեռներ չեմ տեսել, խօսեց Նեջափը ի պատասխան Սելիմին և աւելացրեց, — փառք Ալլահին, այսօր իմ հերթը չէ: Սելիմ, դու պէտք է շախտայ մտնես:

—Թող քո ասածը լինի: Վաղն էլ խօս դ՞ու ես մտնելու: Ի՞նչ զանազանութիւն այսօրւայ և էգուցւայ մէջ: Աշխատանքը և խանը միևնոյն բաներն են. ինչքան էլ փախչելու լինենք նրանցից, էլ աւելի մօտենում ենք:

## II.

Տխուր է Սելիմը: Հոլանի թիկունքը արևի ճառագայթներին տւած՝ սև ու խոր աչքերը յառել է հեռաւոր հորիզոնի աննշմարելի կէտերին: Նրա առաջ թրվուում են թիթեռնիկները... Ու նա յիշում է իւր վաթանը, հսկայ Սաւալանի կանաչազարդ փեշերը, ուր շատ է տեսել թիթեռնիկներ, ոչ այսպիսի անգոյն ու անփայլ ողորմելիներ, այլ բազմազոյն ու բազմափայլ... Արդեօք սրանք

այնտեղից չէ՞ն—փախստական այնտեղից: Եւ այդ պատ-  
ճառով սիրելի են սրանք իրեն, չէ՞ որ ինքն էլ փախստա-  
կան է, փախստական դարդի ու ցաւի, անիրաւութեան  
ու անարդարութեան ձեռքից: Սելիմն այնքան էր տար-  
ւել իր մտածմունքներով, որ մոռացել էր շախստան, ուր  
այնպէս մոլթ է ու խոնաւ...

Նրան իւր մտածմունքներից սթափեցրեց վարպետի  
ձայնը.

— Դէհ, Սելիմ, ձգիր օղակները, օրը մթնեց:

Սելիմը հնազանդւեց. օղակներն անցրեց ոտներին և  
ընկերները՝ Նեջափն ու Նեմատը նրանցից կապած թո-  
կերից բռնած սկսեցին կամաց-կամաց բաց թողնել: Ու  
մի փոքր յետոյ սկսեց Սելիմի երգը ձանապարհին.

«Որ խելառ բախտս անողոք է, ի՞նչ օգուտ,

Որ թշւառ սիրտս արիւնոտ է, ի՞նչ օգուտ,

Աչքիս բիբը աչքիցս ելաւ, հեռացաւ,

Որ աչքիս բիբն աչքումս չէ, ի՞նչ օգուտ»<sup>\*)</sup>

Հետզհետէ նրա երգն աւելի խրախտ էր հնչում և  
ձայնն ու նրա արձագանքը ուժեղ:

Նեջափը հիացած էր Սելիմով ու նրա ձայնով, մա-  
նաւանդ երգով: Ո՛րքան վշտոտ ու զօրեղ էր այդ երգը:  
Նեջափին թւում էր, թէ երգողը միայն Սելիմը չէ, որին  
այնպէս դժւարութեամբ բաց թողին դէպի երկրի ան-  
դունդները, այլ այդ երկրի բոլոր բանւորները, բոլոր երկ-  
րի խորքում աշխատողները, իսկ Սելիմը՝ նրանց բոլորի  
հոգին:

Սելիմի երգը մի ընկալե լռեց:

— Հասա՛ր, Սելիմ, կանչեց Նեջափը վերևից:

— Հասայ, հնչեց Սելիմի ձայնը ներքևից, այս ան-  
գամ խուլ ու հաշիւ լսելի:

— Զգո՛յշ եղիր, մի բան պատահելուց թոկը քաշիր:

<sup>\*)</sup> Հաֆլզից:

### III.

Նեջափը յենւել էր ամբողջ մարմնով չարխին: Նրա ուշագրութիւնն սկզբում ներքեւ էր՝ ընկերոջ վրայ, բայց հէնց որ ներքեւից լսեց Սելիմի բրիչի զարկերը և փրնչոցը, կամաց-կամաց նրա մտքից չքացան ընկերն ու նրա աշխատանքը և վերջինիս հետ կապած վտանգը, որ ամեն ըրպէ կարող էր ընկերոջը յաւիտեանս բաժանել նրանից և անձնատուր եղաւ այլ մտքերի: Նրա հայեացքն ակամայ դարձաւ դէպի հարաւ, ահագին գլուխը ծռեց աջ ուսին, ձախ ձեռքը դրեց ականջին և սրտի բռնկման միջից լսելի եղան նրա աղեկտուր մրմունջները.

Աչքիս առաջ փայլողը միշտ քո գեղն է,

Ճանապարհին հանդիպածս ձեր գիւղն է,

Հալխի աչքը տեսնում է քաղցր, անուշ քուն,

Ես եմ անքուն, էդ էլ անխիղճ, քո մեղն է:\*)

Նեջափի տխուր շեշտերի հետ մի սիրուն ներդաշնակութիւն էին կազմում շախտայի ներսից հնչող խուլ դոփիւնները, որոնք մէջ ընդ մէջ խլանում էին, և լսում էր միայն շախտայի կողքին մրափող Նեմատի խռոցները:

Երբ նեջափը վերջացրել էր իւր երգը, լսեց Սելիմի մրմունջները գետնի տակից ու ականջ դրաւ.

Աշխարհում մի օր,

Այդ մէկն էլ խաւար, եաման.

Մի տուն, մի վաթան,

Նրանից էլ փախար, եաման.

Դէհ, զարկիր, ֆալագ:

Ու լռեց: Նորից զարկեց բրիչը հողին, զարկեց ու տնքաց, արձագանք տալով մութ պատերին, խոնաւ խռոցներին:

\*) Հաֆլզից:

— Երգիր, Սելիմ, երգիր, ապրես, մենք միևնույն  
դարդի ձեռքին ենք, երգիր, լսում եմ, — մեղմ ձայն տւեց  
Նեջափը և կրկին անձնատուր եղաւ իր խոհերին...

Քափ ու քրտինք է պատել ամբողջ շախտան իրեն  
քանդողի նման, որի ճակատից շողի է ժայթքում: Ծը-  
խում է շախտան, հողի սիրտը, լցում ցաւ ու դարդով,  
քանդողի սրտի պէս... Ահա և արցունքները, նա կարեկ-  
ցում է Սաւալանի հեռաւոր մարմանդներէից այս որջը  
տարագիր եկածին՝

— Վա՛շ, վա՛շ...

Սելիմը նւաղում է. բրիչն ընկնում է նրա ձեռքից.  
նա շարժում է, կարծես երազի մէջ:

— Ա՛խ, շարունակում է երգել երկիրը, արի գիրկս,  
անտուն-անտէր բալաս: Իմ գիրկն է միակ ապահով տեղը,  
ուր ոչ շոյող թիթեռ կայ և ոչ փորող բրիչ: Իմ գիրկն  
է սկիզբն ու վախճանը, յաւիտենական արդարութիւնն  
ու հաւասարութիւնը. եկել ես, էլ մի գառնար:

— Երգիր, Սելիմ, որքան անուշ է երգդ, մրմնջում է  
ինքն իրան Նեջափը հայեացքը հեռուներն յառած.

Նեջափի ձայնը զարթեցնում է Նեմատին:

— — Ո՞ւր է Սելիմը:

Նեջափն սթափւեց երազներից: Նա նոր ցնցւեց ու  
զգաց, որ կեանքի չափ մի կարևոր բան աչքաթող է  
արել: Ու կանչեց շախտան ի վար.

— Սելիմ հայ, այ Սելիմ:

Ոչ մի ձայն:

— Քաշենք թուր, Նեջափ, քո տունը չքանդւի, ան-  
շուշտ դժբախտութիւն է պատահել:

— Ոտքերս կոտրւեցին... Գետինը կարծես շուռ եկաւ  
գլխիս: Քաշիր, քաշիր թուր...



#### IV.

Սելիմը անշունչ ընկած է շախտայի մօտ՝ հողաթմբի վրայ: Ընկերները շրջակայ շախտաներից հաւաքւել են նրա գլխին և աշխատում են ուշքի բերել, բայց իզուր... նա մեռել է...

Շախտատէր Հաջին ցրում է բոլորին. նա պնդում է, որ Սելիմը մեռած չէ, ուշքի կգայ:

Նեջափը նստել է նրա կողքին, ձեռքը դրել նրա գլխատակը և փորձում է խօսեցնել. իզուր, նա մեռած է...

Շախտատէրը հրամայում է Սելիմին հեռացնել շախտայից և հեռու, ազատ տեղ տանել...

Նեմատն էլ նստած է Սելիմի կողքին. յանկարծ նրա միտքը լուսաւորւում է. նա տանում է ձեռքը Սելիմի գօտին և այնտեղից մի բան հանելով իւր գօտին է խրում:

Երեկոյ է: Շախտային աշխատանքները վերջացել են. մութը իւր թևերը փռել է ամենուրէք. թիթեռները վաղուց քաշւել են դէպի տներից սողոսկող լոյսերը: Մի 2—3 ժամ առաջ նրանց թաւ թևերով շոյւած Սելիմն արդէն հանգչում է գաղտագողի փորւած փոսի մէջ սառն հողում: Ո՛չ ոք չգիտէ նրա տեղը և բոլորը գիտեն նրա տեղը... Եւ այդ վայրում, թւում է, շարունակում է հնչել իւր վերջին նւագները ստորերկրեայ երգը, այժմ մեղմ ու սգաւոր...

Ա. Գեանջեցեան.

## ԼՈՅՍԵՐԸ ՄԱՐՈՒՄ ԵՆ

(Ընկերոջս յիշատակարանից)

...Սիրում եմ վաղորդեան ժպիտները հայրենի գեղա-  
ծիծաղ բնութեան, ուր մատաղ կեանքիս օրերն անցան,  
բայց որոնց անուշ յագեցումներն, աւանդ, երկար ապրել  
ու վայելել չկարողացայ... Հոգիս բարձրանում էր խելա-  
կորոյս թռչնիկների դայլալիկներով, մարդկանց աննենգ  
հայեացքերով, գեղանի կուսի անմեղ ժպիտներով... Կու-  
ցէ վայելքի այդ կարճութիւնը բոց դրեց սրտումս, լոյս  
վառեց հոգուս մէջ, և այնուհետև կայծերի ետևից ընկայ:  
Իսկ կայծերը՝ հեռո՛ւ, հեռո՛ւ...

Ահա այստեղ եմ, կայծերից անդունդներով բաժան-  
ւած այս վայրում, ուր շոգու ոռնոցն է իշխում և ծովից  
արձագանք տալիս շրջակայ մերկ ու այրւած հողաբլուր-  
ներին: Ո՛ւր են այն առաւօտները... արևն անփայլ է  
այստեղ, բնութիւնը՝ անզարդ, իսկ մարդը—մեքենայ:

Ես սնունդ եմ ընդունում, ելնում անպատուհուն սե-  
նեակիցս ու դիմում դէպի պաշտօնատեղիս:

Ոհ՛, այդ փողոցները... Կեանքի ամեն կեղտ իր ներ-  
սըն առնելու պատրաստ կաթսան է եռում այնտեղ... Եւ  
ես նրա մէջ... Ո՛չ, նրա կողքին, նայում եմ ներսը...  
Ինչե՞ր ասես, որ յատակից գլուխ չեն բարձրացնում, նո-

ըից տակն անցնում, տեղ տալով հետզհետէ աւելի գար-  
շելիներին:

Հասնում եմ ծովափնեայ փողոցին և ներս մտնում  
պաշտօնատեղիս:

Դռան շէմքին ծառան յայտարարում է.

— Պարոնն արդէն եկել է:

— Յետո՞յ.

— Ի՞նչպէս թէ յետոյ, նա երկու անգամ հարցրել է,  
թէ արդեօք տղերքն եկել են...

— Կարող ես յայտնել, որ ես եկայ:

— Միւսներն արդէն բոլորն այստեղ են:

— Հա՛, ուրեմն յայտնիր, որ ես ամենքից վերջը ե-  
կայ:

— Ես այդ չէի ուզում ասել...

— Դէ լա՛ւ, լա՛ւ, ինչ ուզում ես և ինչպէ՞ս ուզում  
ես, այնպէս էլ յայտնիր պարոնին:

Զգիտեմ ինչպէս եմ հասնում տեղս, որովհետև ամ-  
բողջ ժամանակը միտքս զբաղւած էր այդ ինձ հետ պա-  
տահած տեսարանով: Ի՞նչ կապ իմ և այդ ծառայի միջև.  
սկսեցի համեմատել նրան՝ այդ փոքր ծառային իր և մեր  
բոլորիս մեծ պարոնի հետ: Անշնչաւ, ծառան բարձր է հո-  
գով, նա գործիք է միայն մեծի յղացումներն իրագործե-  
լու համար: Կամ գուցէ կամենում էր վարպետութեամբ  
զգուշացնել ինձ: Ու սկսում եմ զղջալ, թէ ինչու կոպ-  
տութեամբ պատասխանեցի նրան: Ապա նորից միտքս  
դառնում է դէպի մեծ պարոնը. յիշում եմ պաշտօն  
ստանձնելուս առաջին ամիսը. — Պարոնը չի խօսում. հան-  
դիպելիս չի պատասխանում բարեիս. միւս ծառայողնե-  
րը ոտճիկ են ստանում, իսկ ինձ ոտճիկ չի տրւում, որով-  
հետև մեծ պարոնը կարգադրել է, որ ամսի 1-ից յետոյ  
մտնողներին այդ ամսւայ ոտճիկը չտրւի:

Անցնում է մի առժամանակ: Գրասենեակում մեռել-  
լուծիւն է տիրում: Այս ու այն անկիւնում երբեմն միայն  
շշուկներ են լսւում, բայց ոչ մի մտերմութիւն այդ մարդ-  
կանց մէջ չեմ նկատում: Իրար հետ բոլորովին չխօսող-  
ներ էլ կան, և մեծ պարօնն, ասում են, ուրախ է, որ  
այդպէս է: Իմ նկատմամբ մի առանձին խորթութիւն եմ  
նկատում նրանց կողմից, թէև ինքս միշտ աշխատում եմ  
մօտենալ և մտերմանալ:

Մի օր հարևանս մօտենում է ինձ և ծածուկ շշնջում.

— Անշո՛ւշտ, թոյլ կը տաք մի խորհուրդ տալ ձեզ:

— Խնդրե՛մ, պատրաստ եմ լսելու:

— Գիտէ՞ք, նոյն իսկ քաշւում եմ ասելու, բայց  
ստիպւած ասում եմ՝ թողէք... գրելը:

— Ի՞նչ գրել:

— Մի՞թէ չէք հասկանում, թէ ինչի մասին է խօս-  
քը... թերթերում:

— Բանն ինչո՞ւմն է, չեմ հասկանում:

— Պարօնը բաժանորդ է այն թերթին, որի մէջ դուք  
էք գրում, և թէև երբէք չի կարդում, բայց հասկացրել  
են ու նա ասել է. «Ա՛, ուրեմն՝ սա էլ այն կիսաքաղցնե-  
րից է և միաժամանակ իմ գրասենեակում ծառայող, այդ  
լաւ բան չէ, դրանից լաւ բան չեմ գուշակում»...

Ես ուշադրութիւն չեմ դարձնում այդ բոլորին: Պա-  
րօնին անհանգստացնող պատմւածքներն իրար ետևից ե-  
րևան են գալիս, և, երևի, նրան յայտնում են այդ մա-  
սին. — «Ա՛յ, քեզ ծառայող, քո հացն ուտող կիսաքաղց-  
ները, տես, ինչէ՞ր են գրում քո կարգի մարդկանց մա-  
սին»:

Ամենօրեայ զբաղմունքը շարունակւում է իր սովո-  
րական կարգով. — հաշւեմեքենայի շրխկոցը բռնել է ամ-

բողջ գրասենեակը: Պաշտօնակիցներիցս որը գրում է, որը ստուգում, իրարից տեղեկութիւններ վերցնում, հաշիւներ առնում: Սպասաւորները թէյ են տանում ու բերում, սըրան-նրան հեռախօսի մօտ կանչում, իսկ իմ գրչի տակից ելնում են պաշտօնական սառն ու կտրուկ նամակները՝ «Ողորմած Տէր...»: Այդ բոլորի հետ միասին մտքումս շարան-շարան վեր են բարձրանում մռայլ ու լուսաւոր պատկերներ, լուսավառում, զուգորդում ու մի ներդաշնակ վայելքով համակում հոգիս... Եւ «ողորմած Տէր»-երը վերջացնելուց յետոյ գրիչս ակամայ այլ թղթի է անցնում ու այնտեղ գծագրում այդ պատկերները. —

...«Մատաղ, դեռ փխրուն ընկել է այս անիծեալ վայրը այն պատանին, մեծ պարոնի համար աշխատելու, մարդ դառնելու վառ յուսով: Նրա հայրը, պարոնի բարեկամը, ասել է սրան. «Քեզ եմ տալիս որդուս, ինչ ուզում ես արա, միայն մարդ դարձրու»: — Աչքիս լուսի պէս կսիրեմ, կխնամեմ, կսովորեցնեմ, միայն հնազանդ պիտի լինի, հնազանդ: Ահա իմ խլիսաւոր պայմանը: Ռոճիկ կընշանակւի գործին ծանօթանալուց յետոյ: Ես էլ մարդ եմ, խիղճ ունիմ, լաւ կլինի, անհոգ կաց... Ու պատկերները շարունակւում են այսպէս, մինչև տասն տարուց յետոյ գործը սովորած այս տղան տարեկան 300 ռուբլի է ստանում ու հեռանում, երբ հայրը պահանջում է վերջնականապէս որոշել ռոճիկը»...

Յանկարծակի բացւում են մեծ պարոնի առանձնասենեակի դռները: Ես սթափւում եմ և աչքերիս տակով նայում. նա մօտենում է ինձ ոտների մատների վրայ ու կանգնում կողքիս.

— Ի՞նչ էք անում:

— Նամակները վերջացրի, պայմանագրերն արտագրեցի ու յանձնեցի հաշւապահին...

—Երեխայի հետ չես խօսում,, դուք ահա հայերէն էք գրել, իսկ իմ գրասենեակում հայերէն գրելու բան չկայ: Ինչպէս երևում է շատ ազատ ժամանակ ունիք, ուստի այսօրւանից ձեզ եմ յանձնում մեր նոր շոգե-նաւային ընկերութեան գործավարութեան մի մասը:

—Ըստ իս՝ ես միւս ընկերներից պակաս չեմ աշխատում, եթէ աւելին չասեմ:


—Ձեր «ըստ իսը» թողէք. երբ ձեր կարծիքը կը հարցնեն, այն ժամանակն ասացէք «ըստ իս»: Ձեր «իսն», ինչպէս երևում է, շատ է զարգացած. ուստի մեզ նմաններին էլ բան էք ուզում սովորեցնել և այդ պատճառով այլ ևս մեզ մօտ ծառայել չէք կարող:

Մեծ պարոնի այդ անիրաւ, գուցէ, ըստ նրա, արդար ու իրաւացի վարմունքընոր մտքեր արթնացրեց գըլխումս, նոր լոյսեր վառեց հոգուս մէջ... բայց այն միտքը որ ես այնպէս անպաշտօն ու ձեռնունայն փողոց պիտի նետւիմ մի մեծ պարոնի կամքի մի քմահաճոյ խաղով, նորից յիշեցրեց ինձ վաղուց մոռացւած «եռուն կաթսան» ու միտքս մոռայլեց և լոյսերը հոգուս մէջ սկսեցին մարել...

Արդեօք նորից կվառուէն նրանք...

Ա., Գեանցեցեան

# ԳՐԱԽՕՍՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ



## ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ

Թաք ըլի դ՛ու, դ՛ու, իմ  
պատւական ազգ, քո որդու ա-  
րածը, քո որդու խակ լեզուն սի-  
րես...

Խ. Արուտյան.

Հին ժամանակ մեր գրքե-  
րը գրուում էին գրաբար լեզ-  
ւով. այն լեզւով, որով գրուած  
են եկեղեցական գրքերը: Այդ  
հին գրքերը հոգևորականներն  
էին գրում՝ հին-հին թագա-  
ւորների ու իշխանների, կա-  
թողիկոսների ու սրբակեաց  
վարդապետների մասին: Այդ  
հին գրքերում պատմւում ու  
երգւում է Աստուծոյ մեծու-  
թիւնը, Քրիստոսի հրաշագոր-  
ծութիւնները և նահատակնե-

րի կեանքը. բայց այդ հայե-  
րէն գրքերի մէջ համարեա  
չէ յիշատակւում հայ ժողո-  
վուրդը. այն ժողովուրդը, որ  
հին լեզւով կոչւում էր  
«ռամիկ, գեղջուկ»: Այդ գրքե-  
րը կարդում ու հասկա-  
նում էին միայն իշխաններն  
ու հոգևորականները. նրանց  
լեզուն ժողովուրդը չէր հաս-  
կանում, նա իշխանական,  
սուրբ լեզու էր համարւում.  
դրա համար էլ հայ գիւ-

դական ժողովուրդը միշտ էլ տգէտ էր ու խաւար: Մինչև վերջին ժամանակներս ոչ ոք իրաւունք չունէր ժողովրդի լեզուով գիրք գրելու. դա մեծ յանցանք էր համարւում. այդպիսի լեզուով գրողն էլ թէ հալածւում և թէ տգէտ էր համարւում:

Մեզանից 60—70 տարի առաջ մի քանի մարդիկ տեսնելով գրաբար լեզւի ու գրաբար գրքերի անօգտակար լինելը, փորձեցին աշխարհաբար գրել, որ ժողովուրդը կարդայ ու հասկանայ: Թէև դրանք հալածանքների ենթարկւեցին, բայց նրանց գործը չմեռաւ: Այդ մարդկանցից ամենից մեծը Պաշատուր Աբովեանն է:

Ո՞վ է Աբովեանը:

Նա ծնւել է Երևանի մօտ՝ Քանաքեռ գիւղում 1804—1805 թ. պարսից տիրապետութեան ժամանակ: Հայրն իբրև գիւղի անւանի մարդ՝ իր որդի Պաշատրին տարաւ Էջմիածին և յանձնեց Անտօն եպիսկոպոսին՝ ուսում ստանալու: Պաշատուրն ընդունակ երեխայ էր: Մի քա-

նի տարի սովորելուց յետոյ՝ նրան փոխադրեցին Թիֆլիս, որտեղ կարճ ժամանակից յետոյ՝ 1823 թւին նա ընդունւեց նորաբաց Ներսիսեան դպրոցը: Իր առաջին ուսուցիչների մօտ նա կարդում էր միայն գրաբար եկեղեցական գրքեր. առաջին անգամ Ներսիսեան դպրոցում նա ծանօթացաւ ուրիշ գիտութիւնների հետ ևս և ուխտեց աւարտելուց յետոյ ծառայել ազգի կրթութեան գործին:

Աբովեանի հոգու մէջ ցուցած այս ուխտն էր, անշուշտ, պատճառը, որ Ներսիսեան դպրոցն աւարտելուց յետոյ նա մտաւ Էջմիածնի հոգևորականութեան շարքը որպէս կիսասարկաւագ և միաբան:

Բայց բաղդը ուրիշ տեսակ էր տնօրինել՝ որ Աբովեանը չպիտի դառնար որպէս մի արժանաւոր հոգևորական, այլ՝ ազգի փրկիչ. — այդ ժամանակ, 1829 թւին, երբ Հայաստանի հայաշատ նահանգները ուսաց ձեռքն էին անցել, Էջմիածին եկաւ Դօրպատի համալսարանի պրօ-



Ֆեասօր Պօրրօտը՝ Մասիս  
րարձրանալու. նա կաթուղի-  
կոսի համաձայնութեամբ Ա-  
բովեանին իր հետ վերցրեց,  
որպէս տեղական կեանքին  
ծանօթ և թարգման մարդու:

Աբովեանը շատ դուր ե-  
կաւ պրօֆեսսօրին — որպէս  
խելացի, ուսումնասէր և մա-  
քուր մարդ:

Պրօֆեսսօրը Դօրբատ վե-  
րադառնալիս շուտով Աբո-  
վեանին իրեն մօտ կանչեց  
և պետութեան հաշուով ըն-  
դունել տուաւ համալսարան,  
ուր նա մնաց 6 տարի, ստա-  
ցաւ գիտութեան մեծ պա-  
շար և վայելեց թէ պրօֆես-  
սօրի և թէ բոլոր շրջապա-  
տողների սէրն ու խնամքը:

1828 թւին Կովկասը ա-  
զատեց պարսից լծից և միա-  
ցաւ Ռուսաստանին: Այդ  
դէպքը բաւականին խոշոր նը-  
շանակութիւն ունեցաւ կով-  
կասահայերիս համար: Հայ  
ժողովուրդը շատ էր ոգևոր-  
ւած այն յաղթութիւններով,  
որ տանում էին ռուսաց բա-  
նակները պարսիկների դէմ.  
դրա համար էլ ամեն զոհո-  
ղութիւն յանձն էին առնում

ռուսների գործը յաջողեցնե-  
լու. հայ գիւղացիներից կազմ-  
ւած կամաւոր խմբերը բոլոր  
կռիւններին համարեա մաս-  
նակցում էին, և հայ ժողո-  
վուրդը հաւատացած էր, որ  
իր ազատութեան ժամը հըն-  
չել է:

Այդ բոլորը ոգևորում էին  
և երիտասարդ սարգալագ  
աբովեանին. սակայն նա միւս  
կողմից էլ տեսնում էր, որ  
հայ իսկական ժողովուրդ  
կազմողը՝ այն է հայ գիւղա-  
ցիութիւնը խաւար ու տգէտ  
է, նա արհամարհւում է:

Այդ է պատճառը, որ երբ  
բաղդի բերմամբ նա Դօրպա-  
տում բարձր ուսում ստացաւ  
և վերադարձաւ հայրենիք,  
վճռեց իր վաղուցայ ուխտը  
իրագործել՝ իր ստացած լոյ-  
սից բաժին հանել իր հայրե-  
նակիցներին, նրանց սրտից  
ու նրանց մասին խօսալ: Բայց  
խօսալ այն լեզուով, որ ամեն-  
քը հասկանան:

Սակայն այդ ժամանակեւ  
հոգևորականները, մանաւանդ  
կաթողիկոսը թշնամաբար էին  
վերաբերւում Աբովեանին.  
նրան համարում էին բողո-

քական: նրանց թշնամու-  
թիւնը մեծացաւ մանաւանդ  
այն ժամանակ, երբ Աբով-  
եանը ցանկացաւ աշխարհա-  
բար լեզուով դասագիրք գրել:  
Հոգևորականութիւնը՝ իբրև  
հին կարգերի պաշտպան՝ բո-  
լոր ուժով զինուեց նրա դէմ  
և միջոցների մէջ խտրութիւն  
չէին դնում՝ նրան հալածելու  
համար:

Աբովեանը հրաժարուեց հո-  
գևոր կոչումից, մտաւ պետա-  
կան ծառայութեան՝ իբրև տե-  
սուչ նահանգական դպրոցի,  
սակայն նրան հանգիստ չէին  
տալիս, և նրա պաշտօնը շա-  
րունակ ցածրացնում էին,  
մինչև որ բոլորովին արձակե-  
ցին պաշտօնից:

Հոգևորականութեան ար-  
համարհանքը դէպի աշխար-  
հական՝ մանաւանդ ժողովր-  
դի հասարակ դասը այն աս-  
տիճանի էր, որ նա իր հո-  
գևոր դպրոցներում նրանց  
երեխաներին չէր ընդունում:

Պաշտօնից արձակուելուց յե-  
տոյ Աբովեան մասնաւոր  
դպրոց էր պահում. բայց միշտ  
էլ մի միտք իրեն տանջում  
էր. ինչպէս լոյս ու գիտու-

թիւն տարածէ իր հայրենա-  
կիցների մէջ: Նա տեսնում  
էր հայի յետամնացութիւնը,  
և սիրտը մորմոքում էր:  
Տեսնում էր, որ գրաբար գըր-  
քերը անհասկանալի են ժո-  
ղովրդին. տեսնում էր, որ  
նրանց բովանդակութիւնը չէ  
հետաքրքրում նրանց. տես-  
նում էր, որ ժողովրդի ցաւի  
ու հոգսի մասին խօսող չկայ.  
միւս կողմից՝ աշխարհաբար  
գրողին տգէտ են անւանում  
ու հալածում. ի՞նչ անէր. չէ՞  
որ ինքը հազարաւոր վերս-  
տեր էր անցել, լոյս ու գի-  
տութիւն ստացել ժողովրդի  
համար:

Ահա այսպիսի հազարաւոր  
մտքեր նրան տանջում էին,  
երբ նա մի անգամ վճռեց  
արհամարհել ծաղրն ու հալա-  
ծանքը և գրել ժողովրդի լեզ-  
ւով ու ժողովրդի համար:

Այդ նպատակն իրագործելու  
համար նա սկսում է գրել  
Աղասու պատմութիւնը, որ  
կոչւում է «Վէրք Հայաստա-  
նի», և որի մէջ նա ասում է.

— Թող ինձ այսուհետև տը-  
գէտ կանչեն. լեզուս բաց ա  
էլել՝ իմ ընտիր, ազիզ, իմ

սրտի սիրեկան ազգ: Թող տրամաբանութիւն գիտեցողը իրան համաքարի համար գրի, ես, քո կորած, շւարած որդին՝ քեզ համար... Թագ ըլի դո՛ւ, դո՛ւ՛ իմ պատւական ազգ, քո որդու արածը, քո որդու խակ լեզուն սիրես, ընդունես, ինչպէս հէրը իր մանուկի կմկմալը, որ աշխարհքի հետ չի փոխիլ:

Երբ որ կըմեծանամ, խրթին լեզուով էլ կը խօսանք: Աղասին քո որդին ա, սրանից դհա մեծ, դհա անւանիքը շատ ունիս. ինձ մի սիրտ տո՛ւր՝ արևիդ մատաղ գնամ, տես՝ թէ ի՞նչ ձևով եմ գնում, նրանց բերում, առաջիդ կանգնեցնում, որ դուն էլ զարմանաս՝ թէ էնպէս որդիք ունեցողը աշխարհքումն էլ ի՞նչ դարդ կ'անի, երեսս ոտիդ տակը»:

Աբովեանն իբրև մի աշուղ՝ երգում է՝ պատմում իր հերոս Աղասու մասին, նրա քաջագործութիւններին, նրա ազնւութեան ու գեղեցկութեան մասին:

Նա իր զգայուն սրտի ամբողջ թափով սիրում էր իր

հայրենիքն ու ազգը (հայ գիւղացուն). և այդ զգացումները նա դնում է գիւղացի պարզասիրտ ու քաջ Աղասու սրտում, որը պատրաստ էր ամեն ըոպէ գոհւելու իր ազգի համար: Նա տեսնում էր խաւար ժողովրդին, որին ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում զօրեղները, սիրտը մորմոքում էր և սիրում էր տեսնել ժողովրդի ծոցից դուրս եկած անձնագոհ ու վրէժխնդիր անձինք, ինչպիսիք են Աղասին ու նրա ընկերները:

Աղասին մի գիւղացի պարզ երիտասարդ էր, ոչ թէ պատրաստ ծրագրով, որոշ ուղղութեամբ գործող, այլ մի հզօր բազուկ, որ ամեն տեղ պատրաստ է նեղւած հային օգնութեան հասնել:

Աբովեանը այդ գրւածքով կռիւ յայտարարեց այն ամենի դէմ, ինչ որ հին էր և ամբողջ հոգով պաշտպան կանգնեց հայ գիւղացիութեան, նրա գործածական կենդանի լեզւին, որոնք այնպէս առանց հաշւի արհամարհւում էին:

Եւ նա յաղթանակը տա-  
րաւ:

Նրա գիրքը, իբրև մի յոր-  
դանոս գետ, քշեց, մաքրեց  
հայ գրական անդաստանից և՛  
գրաբար լեզուն և՛ գրաբար գը-  
րականութիւնը՝ գործածու-  
թեան մէջ դնելով աշխարհա-  
բար լեզուն և գրականու-  
թեան նիւթ դարձնելով հայ  
գիւղական ժողովրդի կեանքը:

Նա իր գիրքը գրեց Քանա-  
քեռի բարբառով, որը թէև  
այժմայ մեր գրական լեզուն  
չէ, բայց նա դրանով ցոյց  
տուեց, որ ժողովրդի համար  
պէտք է աշխարհաբար գրել,  
որ ժողովրդի լեզուն իրաւունք  
ունի ապրելու. նա չպիտի  
արհամարհւի այնպէս, ինչ-  
պէս հոգևորականներն էին  
ասում:

Աբովեանի գրքի մէջ ա-  
ռաջին անգամ երևան եկաւ  
գիւղական ժողովուրդը, իր  
ուրախութիւններով ու տըխ-  
րութիւններով, իր սովորու-  
թիւններով ու նիստ ու կա-  
ցով:

Այսպիսով նա հասկացրեց,  
որ եթէ հայ ազգի մասին են  
ուզում գրել, պէտք է գրեն  
գիւղական ժողովրդի մասին,  
որովհետև նա է ազգը կազ-  
մում, որ հայ ժողովրդին  
չպիտի իրաւագուրկ դարձնել

ու արհամարհել, որովհետև  
Աղասին ու իր քաջ ընկեր-  
ները, որոնք հայրենիքի ա-  
զատութեան համար ընկան,  
հայ գիւղական ժողովրդի ծո-  
ցից դուրս եկան:

Սակայն Աբովեանը չտե-  
սաւ իր գրքի տպագրութիւ-  
նը, որքան էլ նա ցանկա-  
նում էր:

Այդ գիրքը գրելուց մի  
քանի տարի յետոյ 1848 թ.  
ապրիլի 2-ին, առաւօտեան  
իրենց տնից դուրս եկաւ և  
այլևս չվերադարձաւ: Ո՞ւր  
գնաց, ի՞նչ պատահեց նրան,  
ոչ—ոք չգիտէ:

Եւ այսօր հէնց իր բառերով  
պարտաւոր ենք ասելու.

Գերեզմանը կորած, հո-  
ղումը թաղւած...

Բայց ինքը չէ մոռացել,  
նրա յաւիտենական արձանը  
մնում է. դա նրա «Վէրք  
Հայաստանին» է, նրանով  
ստեղծած գործը՝ աշխարհիկ  
գրականութիւնը, որ օրէց օր  
մեծանում է:

S. S.—Գ

Ծանօթ.

Աբովեան բացի «Վէրք Հայաս-  
տանից» գրել է և գրաբար ոտա-  
նաւորներ, առակներ՝ «Պարսպ  
վախտի խաղալիք» վերնագրով,  
«Յիշատակարան»՝ Մասիս սարը  
բարձրանալու նկարագրութիւնը,  
«Օվսաննա» վէպիկը և «Ֆէօդո-  
րա» պատկերները:

# Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Բ Ա Փ Ի Ն

## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նախապատմական շրջան

Մարդկային ցեղերի քաղաքակրթութիւնը՝ ուսում, գիտութիւններ և արհեստներ միանգամից չեն առաջ եկել, այլ երկար դարերի ընթացքում, երկարատև և յամառ աշխատանքի շնորհիւ: Քաղաքակրթութիւնն արագ կերպով սկսել է զարգանալ այն ժամանակ, երբ մարդիկ ընտելացել են նստակեաց կեանքին, այսինքն երբ նրանք բացի որսորդութիւնից և խաշնարածութիւնից սկսել են պարապել երկրագործութեամբ և արհեստներով: Ի հարկէ այն մարդիկ, որոնք վարուցանքով են պարապում ու իրանց ապրուստը դրանով ձեռք բերում, չեն կարող իրանց արտերը վարած, կամ կանաչած թողնել ու հեռանալ ուրիշ վայրեր. նրանք պէտք է սպասեն, որպէս զի հնձեն, կալսեն, երկիրը նորից մշակեն ու պարարտացեն և այդպէս շարունակ. այդպիսի աշխատանքը մարդկանց ստիպել է ունենալ հաստատուն բնակարաններ, ուրեմն առաջ է եկել շինարարական արհեստը. ի-

րանց գործը հեշտացնելու համար պէտք է մտածէին յարմար գործիքներ հնարելու, որի համար պէտք է առաջ գային ու զարգանային մի քանի արհեստներ՝ դարբնութիւն, հիւսնութիւն և այլն:

Այսպիսով երկրագործութիւնը մեծ չափով նպաստեց մարդկանց մէջ քաղաքակրթութեան երևան գալուն: Իսկ մենք գիտենք, որ մարդիկ շատ դարերում վայրենի դրութեան մէջ էին, ապրում էին որսորդութեամբ, ինչպէս իրենց շրջապատող զազանները: Այժմ էլ շատ տեղերում դեռ կան միմիայն որսորդութեամբ ապրող վայրենիներ ու կիսավայրենի խաշնարած թափառականներ. նրանց մէջ քաղաքակրթութիւն կամ բոլորովին բացակայում է, կամ շատ ստոր աստիճանի վրայ է նա:

Այդ պատճառով ամենահին քաղաքակրթութիւնը երևան է եկել ու զարգացել այն երկրներում, որոնք յարմար էին երկրագործութեան համար: Այդ երկրներից

մէկը Այրարատեան դաշտն է, Արաքսի հովիտը, որ այժմ կազմում է Երևանի նահանգը: Դամի ընդարձակ դաշտ է, որի կենտրոնում փառահեղօրէն բարձրանում են Մեծ ու Փոքր Մասիս կամ Արարատ գագաթները: Մեծ Արարատը այնքան բարձր է, որ նրա գագաթի ձիւնը ամառ-ձմեռ չէ հալչում: Շատ սիրուն տեսք ունի նա. ամենահեռու տեղից նկատելի է, երբ ամառը, պարզ եղանակին արևը թեքւում է դէպի իր մուտքը և վերջին ճառագայթները տարածւում են նրա ձիւնածածկ գագաթի վրայ, կարծես անգին քարեր են պսպղում. իսկ երբ սև ամպերն են կուտակւում, կայծակն է ճայթում ու ակօսում նրա գագաթի շուրջը, այն ժամանակ զարհուրելի է:

Շատ հեռաբնակ ցեղեր ամենահին դարերից գիտէին Մասիս սարի «Արարատ» անւան մասին. «Արարատ» անունը յիշւում է նրանց մի աւանդութեան մէջ՝ թէ ինչպէս ջրհեղեղից յետոյ Նոյի տապանը իջել է նրա վրայ, այդ պատճառով նրա շուրջը տարածւած երկիրն էլ նրա անունով կոչւում էին Ուրարտու կամ Արարատեան երկիր:

Արաքսը ոտոգում է այդ երկիրը մի ծայրից մինչև միւսը. երբ նա յորդանում է, ամիբրից դուրս է գալիս, իր ջրերի հետ պարարտ տիղմ է սփռում երկրի

վրայ, որը շատ յարմար է երկրագործութեան համար. հողը փխրուն է, և նա շարունակ իր ընթացքը այս ու այն կողմն է ծռում: Մի ժամանակ՝ Քրիստոսից շատ առաջ, նա առանձին էր թափւում Կասպից ծովի մէջ. իսկ այժմ, ինչպէս գիտենք, նա մօտեցել է Կուրին ու խառնւում է նրա հետ: Արաքսն է իր ջրերով ու իր վտակներով ջուր տալիս, ծարաւը յագեցնում Արարատեան երկրին. դրա համար է, որ նրան էլ տւել են «Մայր-Արաքս» անունը:

Արաքսի հովիտը կամ Արարատեան երկիրը Ասիայի ամենահեռաւոր անկիւններից մէկն է. դրա համար ամենահին դարերում բոլոր հալածւած ցեղերը, ազատութիւն որոնողները ապաստանում էին այդտեղ: Իսկ մենք գիտենք՝ հազարաւոր տարիներ առաջ մարդիկ ինչպիսի բարբարոսութիւններ էին գործում. ով ուժեղ էր, իրաւունքը նրանն էր: Եւ այն ցեղերը, որոնք չցանկացան ուժեղների ստրուկը լինել, փախան այդ հեռաւոր անկիւնը իրանց առաջնորդների՝ նահապետների հետ և բնակութիւն հաստատեցին Արաքսի կամ նրա ճիւղերի ամիբրին: Այդպիսով հետզհետէ կազմւեցին փոքրիկ գաւառներ իրանց գլխաւորներով. այդ գաւառները հնում կոչւում էին և «հովիտներ»:

Գա այն ժամանակն էր, երբ մարդիկ մետաղէ գործիքներ չունէին. նրանք իրանց գործիքները պատրաստում էին ամուր քարից: Այդ շրջանը պատմութեան մէջ կոչւում է Քարէ դար: Այժմ էլ կողբի աղահանքը փորելիս գտնում են այդ քարէ գործիքներին:

Ի՞նչ մարդիկ էին եկողները, ո՞ր ցեղին էին պատկանում, ի՞նչ լեզուով էին խօսում—ոչ ոք չգիտէ, որովհետև նրանք ապրում էին Քրիստոսից հազարաւոր տարիներ առաջ: Բայց վերջին ժամանակներս գտնւել են նրանց յիշատակները. նրանք իրանց մեռելները թաղում էին զէնք ու զրահով, երբեմն տնային իրեղէններով ու ձիու սարքով ու նրանց վրայ բարձր հողաթումբ էին կանգնեցնում. այդ գերեզմաններից հանւում են նրանց զէնքերն ու այլ իրեղէններ: Նրանց թագաւորները սովորութիւն ունէին որևէ մղած պատերազմի, տիրած երկրի ու քաղաքի, անցկացրած ջրանցքների մասին քարէ արձանների վրայ գրել: Նրանց գրերը մեխերի նման էին, որոնք կոչւում են բլեռագրեր. այդպիսի արձանագրութիւններ շատ են գտնւած: Գիտնականները կարողացել են այդ գրերի գաղտնիքն իմանալ և կարդալ: Այնուհետև հարևան ազգերը, որոնք գործ են ունեցել

այդ ժողովրդի հետ, իրանց զրութիւնների մէջ յիշատակում են նրանց մասին: Ահա այդ բոլորից կազմել են Արարատեան երկրի կամ, ինչպէս հնում կոչւում էր, Ուրարտուի ամենահին պատմութիւնը:

Այն ցեղերը, որոնք անյիշելի ժամանակներից ՚ի վեր ապրում էին Արարատի շուրջը տարածւած երկրում, ընդհանուր անունով կոչւում էին Ուրարտացիներ կամ Սալդեր: Սալդեր կամ հալդեր կոչւում էին իրենց՝ ամենահին խալդի (Հայկ) նախահօր անունով, որին յետոյ աստւածացրին:

Նրանք բարձրահասակ էին, ուժեղ, ծանր, դիմացկուն, կուր ու աշխատանքի մէջ դաժան, խիստ բնաւորութեամբ և իրանց անկախութիւնը թանկ գնահատող: Նրանց մի մասը պարապում էր երկրագործութեամբ և ընդհանրապէս երկրի մշակութեամբ, իսկ միւս մասը՝ որսորդութեամբ և խաշնարութեամբ:

Նրանք ջրանցքներ էին փորում ու հեռու տեղերից ջուր էին տանում՝ իրանց արտերը ջրելու: Եթէ արտերը լեռների լանջերին էին տարածւում, հեղեղներից պաշտպանելու համար միահամուռ ուժերով պատնէշներ էին կանգնեցնում. առհասարակ խլմբերով համայնական աշխատանք նրանց մէջ նկատելի էր:

Սալդերն ապրում էին փոքրիկ գիւղաքաղաքներում՝ աւաններում, որոնց շուրջը քարէ չոր պատերով ամրացնում էին, կամ թէ հեշտ պաշտպանելու համար շինում էին բարձրութիւնների վրայ:

Մեծամեծ քարեր դարսում էին իրար վրայ ու այդպիսով գոյանում էր պատ: Պարիսպների անկիւններում կանգնեցնում էին քառակիւնի բարձր աշտարակներ: Տները տուփերի՝ փոքրիկ արկղների ձև ունէին. դռները ցածր էին, իսկ առջևից ունենում էին սրահ: Տան կտուրը երկու թեքւածքից էր լինում բաղկացած, որպէսզի անձրևի և ձիւնի ջուրը չկանգնէ:

Նրանց գլխաւորների՝ իշխանների տներն աւելի ընդարձակ էին, երբեմն սիւնազարդ. իսկ սիւները զարդարում էին զանազան քանդակներով:

Սալդերի մի մասն ապրում էին ծառերի վրայ. դրանք կերակրում էին ծառերի պտուղներով ու որսի մսով: Նրանք ծառերի նիւթից պատրաստում էին մի տեսակ արբեցնող իւրմիչք: Երբ թշնամուն տեսնում էին, երգում ու պարում էին և իրանց բարձր աշտարակներից նրանց վրայ էին նետում (խոյանում):

Նրանք պաշտում էին բնութեան երևոյթներ և զանազան

կուռքեր, որոնց զոհ էին մատուցանում: Գլխաւոր աստուածն էր՝ Սալդի կամ Հալդի, որը համարւում էր երկրի տէրը. ամբողջ ազգն էլ նրա անունով կոչւում էր «ազնիւ խալդիացիներ»: Օդի և կայծակի աստուածը կոչւում էր Թէիսպաս և արեգակինը՝ Արդենիս:

Սալդերն ապրում էին մանր ցեղերով իրարից անկախ. ամեն մէկն ունէր իր նահապետը, որ թագաւոր էր կոչւում. այնպէս որ այդ երկիրը լիքն էր բազմաթիւ մեծ ու փոքր թագաւորներով:

Բայց Քրիստոսից 2000 տարի առաջ խալդական այդ մանր թագաւորութիւնների մէջ մի խլրտում ու անհանգստութիւն է ընկնում. պատճառը նրանց հարաւային հարևան Ասորեստանն էր, որ տարածւում էր Եփրատի ու Տիգրիսի հովիտներում: Այդ երկրի թագաւորները ուղղակի գազան մարդիկ էին. նրանք սիրում էին հեռաւոր տեղերից ամբողջ ազգեր քոչացնել, բերել իրանց երկիրը, որպէսզի իբրև ստրուկներ կամ դաշտերը մշակեն, կամ իրանց համար փառահեղ պալատներ ու քաղաքներ և մեծամեծ ջրանցքներ կառուցանեն: Եթէ այդ դժբաղդները դիմադրում էին, այն ժամանակ Ասորեստանի բարբարոս թագաւորները նրանց ջարդում էին մինչև



վերջին մարդը՝ Նրանց բարբա-  
րոսութեան սարսափները տա-  
րածել էր շատ հեռու. այդ սար-  
սափների լուրը հասել էր և Խալ-  
դերին: Այդ վտանգի առաջ Խալ-  
դերի մանր թագաւորութիւն-  
ները ցանկացան միանալ և ի-  
րանց հակառակորդի նման մի  
թագաւորի հպատակել, որպէս-  
զի հեշտ լինի դիմադրելը: Այդ-  
պիսով առաջ եկաւ մի դաշնակ-  
ցութիւն այդ թագաւորութիւն-  
ների մէջ: Ամեն մի փոքրիկ գա-  
ւառ դարձեալ ունէր իր առան-  
ձին թագաւորը, բայց բոլորի նա-  
խագահը կամ առաջնորդը հա-  
մարւում էր բուն Արարատեան  
երկրի՝ Ուրարուի թագաւորը:

Քրիստոսից առաջ, իննեւորդ  
դարից սկսած սկսւում է մի եր-  
կարատե պատերազմ Ասորես-  
տանի և Ուրարուի մէջ: Այդ  
պատերազմների նկարագրութիւն-  
ները արձանագրւած են Վան  
քաղաքի մօտ բարձրացող ժայռի  
վրայ: Այնտեղ Խալդ թագաւոր-  
ների հերոսութիւններն են նկա-  
րագրւած:

Նրանց զէնքերն էին՝ նետ,  
աղեղ, կեռ թրեր, պարսատիգ,  
վահան և նիզակ. նրանք իրանց  
մարմնի վրայ հագնում էին  
զրահ:

Այդ պատերազմների շնորհիւ  
մի կողմից ամենամեծ չափերի  
է հասնում Խալդերի պատերազ-  
մական ոգին, նրանց կորովը,

միւս կողմից աւելի և աւելի ա-  
ռաջ է գնում քաղաքակրթու-  
թիւնը:

Որմնադրութեան արհեստն է  
զարգանում: Ուրարուի թագա-  
ւորներն իրանց երկիրը զարդա-  
րում են պարսպապատ քաղաք-  
ներով ու բերդերով. ի միջի այ-  
լոց նրանցից է մնացել Վան քա-  
ղաքն ու բերդը. զարգանում է  
գիրը. սկսում են պղնձէ ու ա-  
նագապղնձէ (բրոնզէ) իրեր ու  
զանազան զէնքեր պատրաստել.  
պարտիզպանութիւնն է առաջ  
գալիս, նրա հետ միասին և գինի  
պատրաստելու արհեստը: Առաջ  
են գալիս ու զարգանում զա-  
նազան գիտութիւններ, օր. բը-  
ժշկութիւն, աստղաբաշխութիւն,  
կրօն և պատմութիւն. բժշկու-  
թեան համար նրանք գործ էին  
ածում սպեղանի, բոյսերից և  
արմատներից պատրաստած խը-  
միչքներ և ջերմուկներ (հան-  
քային ջրեր): Քարէ տախտակ-  
ների վրայ փորագրում էին աստ-  
ղերի շարժումը՝ տարւայ եզա-  
նակներն ու ժամանակը որոշե-  
լու համար: Կրօն և պատմու-  
թիւն ասելով նրանք հասկանում  
էին աշխարհի սկզբնաւորութեան  
և ջրհեղեղի աւանդութիւնը և  
նրանց շարունակութիւնը կազ-  
մող իրանց աստուածների ու դիւ-  
ցազունների մասին գովասանք-  
ները:

Նրանց թագաւորներից աչքի

ընկան քաջ Արամէն, որ միաց-  
րեց Պալղական բոլոր մանր  
թագաւորներին իր իշխանու-  
թեան տակ. Իսպուհնիսն ու Մեն-  
ւասը, որոնք իրանց երկիրը  
ընդարձակեցին ու կարգ կանոն  
մտցրին, անվեհեր Արգիշտիշը, որ  
14 ճակատամարտերում բոլորո-  
վին ջախջախեց հզօր Ասորեստա-  
նի ուժը և նրանից խլեց առաջ-  
նութեան իրաւունքը:

Նրանց հերոսութիւնները բե-  
րանէ բերան պատմում էին և  
պահպանուեցին երկար ժամա-  
նակ, նոյնիսկ Քրիստոնէութեան  
շրջանում: Այդ աւանդութիւն-  
ներից մի քանիսը մեզ հաղոր-  
դում է Մովսէս Պորենացին.  
դրանք են Հայկի ու Բէլի, Արա-  
մի ու նրա յաջորդների մասին  
աւանդութիւններ:

Սակայն այդ պատերազմները,  
որոնք տևեցին 200 տարի, իրանց  
ջնասակար կողմն էլ ունեցան.

երկիրը տնտեսապէս քայքայւեց,  
ժողովուրդը վայրենացաւ ու ու-  
ժասպառ եղաւ և թէև իր ախոյ-  
եան Ասորեստանն էլ նոյն քայ-  
քայլած դրութեան էր հասել,  
սակայն նորանոր աւելի թարմ  
ցեղեր Ասիայի խորքերից կա-  
մաց-կամաց առաջանալով՝ հա-  
մարեա թէ անարգել մտան Ու-  
րարուի մեծ թագաւորութիւնը  
և բնիկներին մասամբ քշելով,  
մասամբ իրանց հետ ձուլելով  
բռնեցին նրանց տեղը:

Պալղերի այդ վերջնական ան-  
կումը տեղի ունեցաւ Քրիստոսից  
700 տարի առաջ: Նորեկ ցեղե-  
րից մէկն էին և հայերը, որոնք  
վերջնականապէս տիրելով հին  
Ուրարուին, անւանեցին Հայ-  
աստան:

Տ. Տ.-Գ.

# ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲԱԺԻՆ

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

### Ա. ԶՐՈՅՑ—ՄԱՆՐԻԿՆԵՐ

Սկսելով բժշկական զրոյցները, մենք կաշխատենք պարզել ժամանակիս բժշկական գիտութեան հիմունքները և սկզբունքները:

Մեր նպատակն է սրանով ցոյց տալ բժշկութեան մասին տիրող այն սխալ և ֆրասակար հասկացողութիւնները, որոնք տարածւած են մեր ժողովրդի մէջ և մեծամեծ ֆրասներ են առաջ բերում. պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել այս երևոյթի վրայ, որովհետև հասարակութեան բոլոր խաւերի մէջ էլ տարածւած է այն վտանգաւոր հասկացողութիւնը, իբր թէ բժիշկ լինելու համար գիտութիւն հարկաւոր չէ, այլ պէտք է ունենալ փորձառութիւն: Ոչ թէ խուլ գիւղերում, այլ մեծ ու կեդրոնական քաղաքներումն էլ համալսարանաւարտ բժիշկների կողքին վխտում են տեսակ-տեսակ խաւարամիտ և անգրագէտ սնխչիներ, ֆելդշերներ, դալաքներ, տատմէրներ և այլն այլն, որոնք ժո-

ղովրդի աչքում յարգանք վայելելով — մեծ աւերածութիւններ են գործում նրա մէջ: Այս բանը պէտք է բացատրել նրանով, որ հասարակութեան ամենամեծ մասը դեռ անտեղեակ է բժշկութեան մեծամեծ յաղթանակներին — նրա հանճարեղ գիւտերին և յառաջադիմութեանը:

Այդ պատճառով էլ առաջին ակնարկը նւիրում ենք բժշկութեան գիտնական միջանի հարցերի պարզաբանութեան. մինչև 19-րդ դարը, երբ դեռ գիտնական Պատեօրը չէր գտել մանրիկները, բժշկութեան շատ հարցեր չէին պարզւած և հիւանդութիւնների մեծ մասի պատճառները անբացատրելի էին մնացել. հիւանդութիւնները այնպիսի աւերմունք էին կատարում մարդկութեան մէջ, որոնց հետ համեմատւել չէին կարող լենկթէմուրների կոտորածներն անգամ:

Խօլերան, ժանդախար,

դեղին տենդը, ծաղիկը, դիֆ-տերիաը և շատ ու շատ վարակիչ հիւանդութիւններ տարէց տարի հնձում էին միլիոնաւոր մարդկային կեանքեր, անապատ դարձնում երկիրներ և խանգարում ժողովրդների առաջադիմութեան: Ամենամեծ դժբաղդութիւնն այն էր, որ ժողովուրդը չը գիտէր թէ այս բոլորն ինչից է առաջ գալիս և համարում էր այդ ամենը աստուածային պատիժ:

Փրանսիական յայտնի գիտնական Պաստեօրը գտնելով մանրիկը, ահա մարդկութիւնը նոր միայն կարողացաւ կուել այդ սարսափելի թըշնամիների— համաճարակների դէմ: Այդ գիւտից յետոյ առաջ եկաւ մի ամբողջ գիտութիւն՝ բակտերեօլոգիա անունով\*), որի նպատակն էր զբազւել միմիայն այդ փոքրիկ էակների ուսումնասիրութեամբ:

Այդ մանրիկները աշխարհիս ամենափոքրիկ էակներն են. նրանց տեսնելու համար պէտք է ունենալ մանրադիդակ, որը մեծացնում է նրանց 500, 1000 և մինչև 3000 անգամ:

\* Բակտերիա, բացիլ, միկրօր, մանրիկ միկնոյն նշանակութիւն ունեցող բառեր են:

Ամեն — տեսակ վարակիչ հիւանդութիւն ունի իր մանրիկը, որ տարբերում է ուրիշ մանրիկներից իր տեսքով, ապրելու և մեծանալու պայմաններով, ներկւելու ընդունակութեամբ և ուրիշ յատկութիւններով. օրինակ, խօլերայի մանրիկը մի փոքրիկ ձողիկ է, մի քիչ ծուած, ունի մազիկներ մէկ կամ երկու ծայրից, որոնցով շատ արագ շարժւում է:

Բ. էբերտի բացիլը (տիֆի) նոյնպէս ձողիկի նման է, սակայն ունի 10—12 մազիկներ, որոնց միջոցով սա շարժւում է արագ: Թոքախտի մանրիկը էլի ձողիկ է, սակայն շարժողութիւն չունի: Կան մանրիկներ, որոնք փոքրիկ, միկրօսկոպիկ օձերի են նմանում: Կան և աւելի բարդ կազմաւածքով ամէն ձևի և տեսքի մանրիկներ...

Այդ մանրիկները վխտում են ամեն տեղ՝ օդի և թոզի մէջ, գետնի վրայ, հողի, ջրի, կաթի, կանանչու մէջ, մարդկանց և կենդանիների մորթու, հագուստի վրայ, բերանում, քթի մէջ, մի խօսքով ամեն տեղ:

Պարազիտ միջատները, ինչպէս են՝ ճանճը, լուն, թախթաբիթին, մոծակը և

ուրիշները տարածում են տարափոխիկ հիւանդութիւնները խայթելիս, երբ իրանց միջի մանրիկը անց են կացնում ուրիշի մարմնի մէջ և կամ թաթիկներով մանրիկին մի տեղից միւսն են տանում և նրանով վարակում: Օրինակ, ժանդախտը տարածում է լւի միջոցով, որը նախօրոք ծծել էր ժանդախտ ունեցող մարդու կամ կենդանու արիւն. ճահճահին տենդը (Չերմտանդը) ստացւում է որոշ տեսակի մոծակների խայթոցից, որի մէջ պարունակւում է ճահճային տենդի մանրիկը: Խօլերան, տիֆը տարածւում են ջրի միջոցով, բարակացաւ (տուբերկուլեօզը)՝ գլխաւորապէս թոզի միջոցով...

Սակայն միմիայն մանրիկը բաւական չէ, որ մարդ հիւանդանայ: Եղել են բժիշկներ, որոնք փորձի համար կուլ են տւել խօլերայի ուժեղ մանրիկները, որոնցից մի քանիսը հիւանդացել են, միւսները՝ ոչ: Ամեն մարդ կլանում է հարիւրներով տուբերկուլեօզի մանրիկը, սակայն միայն փոքրամասնութիւնն է հիւանդանում. այս բանը բացատրւում է նրանով, որ ուժեղ կազմաւածքի տէր մարդիկ յաղթում, ոչն-

չացնում են մանրիկին, իսկ թոյյ կազմաւածք ունեցողները յաղթւում են նրանից:

Մանրիկը մտնելով կազմաւածքի մի որևէ գործարանի մէջ, ինչպէս՝ թոքերի, լեարդի, ուղեղի, աղիքների մէջ՝ առաջ է բերում երկու տեսակի վնասւածք. առաջին՝ տեղական վնասւածք, որը քանդում, աւերում է օրգանը իր արագ աճումով, և մի րոպէսում կարող է հասնել միլիոնների, և երկրորդ՝ ընդհանուր կազմաւածքի վնասւածք իր արտադրած թոյներով, որոնք որոշ դէպքերում շատ ուժեղ են լինում և թունաւորում են ամբողջ կազմաւածքը:

Կազմաւածքն էլ իր կողմից կուլել է սկսում մանրիկի հետ. արեան գնդիկները բջիջների հետ միասին կըրւում են մանրիկների դէմ, կլանում, ոչնչացնում նրանց և իրենք էլ նրանց հետ ոչնչանում: Այդ միջոցին ամբողջ կազմաւածքն էլ իր բոլոր գործարաններով իր հակաթոյնն է պատրաստում, որով դիմադրում է մանրիկների թոյնին:

Այդ բոլորը մեծ խլրտում են առաջ բերում թէ գործարանների մէջ ջուկ-ջուկ, և

թէ ընդհանուր օրգանիզմի մէջ: Այդպէս են առաջանում թոքերի, աղիքների, կաշւի և այլն բարբոքումներ, այդ պէս են լինում և խօլերան, ժանդախտը, տիֆը, քուլթեշը, դիֆտերիտը և այլն:

Կան մանրիկներ, որոնց թոյները այնքան զօրեղ են, որ 12 ժամայ ընթացքում սպանում են մարդուն, պաշտպանելու ժամանակ չեն տալիս: Այդպիսի դէպքեր շատ են պատահում ժանդախտի, խօլերայի, քուլթեշի և ուրիշ հիւանդութիւնների ժամանակ:

Հիմա առաջւայ նման սարսափելի չեն այդ հիւանդութիւնները, քանի որ մանրիկի գիւտից յետոյ գտան նրա դէմ կուելու միջոցները. ժանդախտը, արդէն 100 տարուց ի վեր չի երևում լուսաւորւած երկրներում: Խօլերան, 30 տարուց աւելի է, մուտք չէ գործել այնտեղ, բժաւոր և դարձող տիֆը նոյնպէս մոռացութեան է տրւած:


Միւս վարակիչ հիւանդութիւնները, որոնք առաջ այնքան ուժեղ էին, հիմա շատ են թուլացել, որոնց բոլորի դէմ էլ կուելու միջոցներ հնարւել են. օրինակ, պատւաստների շնորհիւ, մի շարք հիւանդութիւններ հի-

մա ծանր և սարսափելի չեն մարդկանց համար. — կատաղութեան պատւաստը ազատում է մահից շատերին, որոնք առաջ անբժշկելի էին համարւում. ծաղիկ հիւանդութեան պատւաստը հիմա բոլորովին ազատել է մարդկանց այդ այլանդակող և վտանգաւոր հիւանդութիւնից. բացի պատւաստից, առաջ եկան հակաթոյն—շիջուկներ՝ որոնք պատրաստւում էին լաբարատորիաներում. սրսկելով այդ շիջուկները հիւանդների մարմնի մէջ մանրիկների թոյները չեզոքացնելու համար, թեթևացնում են կազմւածքի կռիւը մանրիկների դէմ:

Կան այնպիսի շիջուկ—հակաթոյններ, ինչպէս դիֆտերիտի շիջուկը, որը ազատում է մարդուն այս մահաբեր հիւանդութիւնից:

Գիտութեան բարձր նպատակն է բոլորովին ազատել մարդկութիւնը վարակիչ հիւանդութիւններից, ուստի նա աշխատում է, որ աշխարհիս երեսից վերջացնէ մանրիկներին, որոնք շատ հիւանդութիւնների արմատ են. և գիտութիւնը այսօր մօտեցել է իր նպատակին, ցոյց տալով միջոցներ, որոնց մասին կը խօսենք հետևեալ անգամ:

Բժ. Մ. Մանդիկեան.



«ՇԱԻԻՂ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

1. Խաչատուր Աբովեան (նկարով)՝ Տ. Տ.-Գ-ի—գինը 3 կոպ.
  2. Հայոց պատմութիւն—նախապատմական շրջան՝  
Տ. Տ.-Գ-ի—գինը . . . . . 3 կոպ.
  3. Առողջապահական գրոյցներ—Ա. զրոյց—մանրիկ-  
ներ՝ բժշ. Մ. Մանգինեանի—գինը . . . . . 2 կոպ.
- «ՇԱԻԻՂ»-ը և նրա գրագարանի յիշած գրքոյկները ծախ-  
ւում են Բագրի «Պօսրեղնիկ» և միւս գրավաճառանոցներում.  
Կարելի է ստանալ նաև Սմբատ Իւզրաշից. (Գօգօլի փողոց,  
տուն № 11).

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1914 Թ.

Բ. Տ Ա Ր Ի

Ն Ո Ր ~ Հ Ո Ս Ա Ն Ք

Գրական, գիտական, քաղաքական-հասարակական ամսագրի  
ՏՄՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ՝ Ռուսաստան տարեկան 7 ռ.,  
կէս տարւայ 4 ռ., երեք ամսւայ 2 ռ. 50 կ., ամսական 80 կ.,  
Արսասահման տարեկան 24 ֆր., կէս տարւայ 15 ֆր., երեք  
ամսւայ 8 ֆր., ամսական 3 ֆր.:

Կը հրատարակւի նոյն ուղղութեամբ և աշխատակ. նոյն կազմով:  
Սմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакция „Норъ-Осанкъ“  
Сергѣевская № 14. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction „Nor Hos-  
sank“ Russie (Caucase).

Բագրի «Պօսրեղնիկ» գրավաճառանոցում ծախւում են՝

1. Չեռնարկ հայոց պատմութեան— հին դար՝ Տ. Տէր-  
Գրիգորեանի . . . . . 70 կոպ.
2. Չեռնարկ հայոց պատմութեան—միջին դար՝ Տ.  
Տէր-Գրիգորեանի . . . . . 55 կոպ.

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1914 Թ. ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# Գ Ո Ր Ծ

Գրական, հասարակական և քաղաքական օրաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆՆ Է՝ Ռուսաստանի համար տարեկան 7 ռ.,  
կէս տարեանը 4 ռ., երեք ամսեանը 2 ռ. 50 կ., մի ամսեանը 1 ռ.  
Թիւրքիայի համար տարեկան 110 դուրուշ., կէս տարեանը 60  
դուրուշ., Ամերիկայի համար տարեկան 5 դոլլար., կէս տարեանը  
3 դոլլար., Եւրոպայի համար տարեկան 25 ֆրանկ. կէս տարե-  
անը 15 ֆրանկ.

Ասլառիկ բաժանորդագրութիւն չի ընդունում

Մեր հասցէն՝ Баку, редакция „Горцъ“, Торговая, № 7. Ար-  
տասահմանից՝ Bacou, Rédaction „Görtz“.

ԲԱՑԻԱՑ Է 1914 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՎԵՑԵՐՈՐԳ ՏԱՐԻ ՀՈՐԻԶՈՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Գրական, հասարակական և քաղաքական օրաթերթի

«ՀՈՐԻԶՈՆ»-ը արժէ Ռուսաստանում տարեկան 8 ռուբլի,  
6 ամիսը 4 ռ. 50 կ. 3 ամիսը 2 ռ. 40 կ. 1 ամիսը 80 կ.  
«Հորիզոն»-ի հասցէն՝ Тифлисъ, редакция „Оризонъ“. հեռախօս №  
15—57. Արտասահմանից՝ Tiflis (Russie Caucase) rédaction du  
journal „Horison“.

ԲԱՑԻԱԾ Է 1914 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# Գ Ա Ի Ա Ռ Ի Չ Ա Յ Ն

Ժողովրդական լրագրի

(գրական, հասարակական, քաղաքական, գիւղատնտեսական և  
կօօպերատիւ)

ԲԱԺՆԵԳԻՆՆ Է՝ Ռուսաստանում տարեկան 3 ռուբ., կէս տարե-  
անը 2 ռ., Արտասահմանում տարեկան 4 ռ., կէս տարեանը 2 ռ. 50 կ.  
Թերթի հրատարակութիւնը անւազը մի տարով ապահովւած է:  
Հասցէն՝ Александрополь, редакция „Гавари Цайнъ“.





